

ՄԱՍԵԱՅ ԱՂԱԿԵՐ



PARISSE 2.

J. BUIJARDIN Sc.

ԱԿԵՏԱՔԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ

LA COLOMBE DU MASSIS

MESSAGER DE L'ARMÉNIE

ԽՐԵԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԳԱՔՐԻԷԼԻ ՎԱՐԳԱՊԵՏԻ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ
 ԵՒ
 ԱՄԲՐՈՍԵԱՅ ՎԱՐԳԱՊԵՏԻ ԳԱԼՅԱՅԵԱՆ.

RÉDIGÉ PAR
 GABRIEL V. AIVAZOVSKY
 ET
 AMBROISE V. CALFA.

ԵՐՐՈՐԴ ՏՈՐԻ

TROISIÈME ANNÉE

Սեպտեմբեր 1857. — Թիւ Թ.

Septembre 1857. — N° 9.

ՓԱՐԻՉ

Ի ԳՐԱՆՈՑԻ Ճ. ԱՐԱՄԵԱՆ
 ԵԿՈՄԻՏԻՆՈՑ

ՅՈՒՅԱԿ ԲԱԺԱՆՈՐԴԱՅ ԱՄՍԱԳՐՈՅ

ԱՄԵՆԱՊԱՏԻ ՍՐԲԱԶՆ ՏԵՐ ՅԱԿՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ
ՊԱՏՐԻԱՐԲ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ. (Երկու օրինակք):

Արէլ Վարդապետ Մխիթարեան, ի Տրապիզոն :
Ազգային Դպրոց, ի Պաղէհնիկ :
Արամեան Գրիգոր Աղա, ի Կ. Պօլիս :
Այաղարեանց Նիկոլայ, ի Տիփլիս :
Այաճանեան Գեորգ Աղա, ի Կ. Պօլիս :
Այրուս Տիրրի Էֆենտի, ի Կ. Պօլիս :
Այիփարեան Մարտիրոս Աղա, ի Չմուշի :
Անարոնեան Յակոբ Աղա, ի Սեբաստիա :
Աղաթոնեան Գրիգոր Աղա, ի Կ. Պօլիս :
Աղաթոնեան Վերապետ Աղա, ի Կ. Պօլիս :
Աղամալեանց Պօղոս Գարրիէլեան, ի Շուշի :
Աղամալեանց Մինաս, յԱզուլիս :
Աղեքսանդրեան Պետրոս Աղա, ի Կ. Պօլիս :
Աղեքսանդրեանց Մարտիոս Աղա, ի Պաղատաս :
Աղեքսանդրեանց Քերոբէ Աղա, ի Կ. Պօլիս :
Աղեքսանդրեանց Մեղզոն Աղա, ի Փարիզ :
Աղեքսանդրեանց Յովնաննուս Աղա, ի Փարիզ :
Աճեանեան Թ. Աղա, ի Կ. Պօլիս :
Ամիրաղեանց Յովնաննուս Աղա, ի Կ. Պօլիս :
Ամիրաղով Ստեփան Աղա Աղեքսանդրի, ի Կ. Պօլիս :
Այվազովսքի Յովնաննուս Աղա, ի Թեոդոսիա. (Բէֆի):
Այվատեան Յովնաննուս Աղա, ի Կ. Պօլիս :
Այվատեան Պ. Վանան, ի Կ. Պօլիս :
Անանեանց Յովսէփ Հայրապետեան, ի Շուշի :
Անդրեանեան Պ. Բարսեղ, ի Ճապ :
Անուխեան Պ. Եսայի, ի Մանչըսթեր :
Անուշեան Վերսիք Աղա, ի Կ. Պօլիս :
Անանեան Իսկուհի Տիփլիս, ի Կ. Պօլիս :
Անանեան Վերապետ Աղա, ի Կ. Պօլիս :
Անանեան Պօղոս Աղա, ի Կ. Պօլիս :
Ապուլիսքի Պետրոս Աղա, ի Կ. Պօլիս :
Ապրոյեան Արքայաճառ Աղա, ի Փարիզ :
Ապրոյեան Գրիգոր Աղա, ի Չմուշի :
Ապրանեան Մանուկ Յովնաննուս Աղա, ի Կ. Պօլիս :
Ապրանեան Ստեփան Պէյ, ի Կ. Պօլիս :
Ապրանեանց Գասպար Գարրիէլեան, յԱզուլիս :
Ավալեան Պ. Յովնաննուս, ի Կալիփար :
Արամեան Սուքրիս Աղա, ի Նիկոմիդիա :
Արայիճեան Մովսէս Աղա, յԱղեքսանդրիա :
Արափանեանց Հայրապետ, յԱզուլիս :
Արզումանեան Յակոբ Աղա, ի Փարիզ :
Արշակ Յակոբրոս Աղա, ի Վեննա :
Աւետիսեան Պ. Ստեփան, ի Փարիզ :
Բարանեանց Արքայաճառ, ի Տիփլիս :
Բարեճամբաս վարժարանն որ ի Կոնստանդուպոլիս :
Բարեյոյս Արսէն Աղա, ի Կարին :
Բարունակեան Պ. Նիկողոս, ի Փարիզ :
Բարսեղեան Ստեփան Աղա, ի Կ. Պօլիս :
Բարսեղեան Պ. Յակոբ, ի Կ. Պօլիս :
Բարսեղեան Պ. Սարգիս, ի Կ. Պօլիս :
Բինկեանեան Յովակիմ Աղա, ի Կ. Պօլիս :
Բինկեանեան Նշան Աղա, ի Կ. Պօլիս :
Բինկեանեան Սարգիս Աղա, ի Կ. Պօլիս :
Բիշմիշեան Մովսէս Աղա, ի Կ. Պօլիս :
Բողղանեանց Բաղդասար Բարաղամեան, յԱժտերիան :
Բուղղանեանց Յովնաննուս Եաքարեան, յԱժտերիան :
Բուրժալեանց Բողոտան Ամրակոմեան, յԱժտերիան :
Գաղտատեան Կարապետ Աղա, յԱղեքսանդրիա :
Գալիփագճեան Ալեքսան Աղա, ի Կ. Պօլիս :
Գալիփագճեան Տիգրան Աղա, ի Կ. Պօլիս :
Գալիփայեան Գեորգ Աղա, ի Կ. Պօլիս :
Գարագճեան Թադիկ Աղա, յԵնաշ :
Գարագճեան Կիմիշ Աղա, յԵնաշ :
Գարագճեան Յովնան Աղա, յԵնաշ :
Գափամաճեան Գարրիէլ Աղա, ի Մանչըսթեր :
Գեորգեան Վերապետ Աղա, ի Կ. Պօլիս :
Գրաշար Պ. Յակոբ, ի Կ. Պօլիս :
Գրիգորեան Մինաս Աղա, ի Կ. Պօլիս :
Գրիգորեան Մինոն Աղա, ի Կ. Պօլիս :
Գրիգորեան Մինոն Աղա, ի Կարին :
Գարիշեանց Գալիք, ի Տիփլիս :
Գուղարեանց Հայրապետ Գաթեան, յԱզուլիս :
Գարատոն Ազգային, ի Մանիսա :
Գրանիտիան Եսայի Աղա, յԵնաշ :
Եգեանց Նիկողոս Աւետիքեան, յԱժտերիան :
Եղիազար Յարութեան Աղա, ի Չարբա :
Եղիկեանց Պ. Վերապետ, ի Ճապ :
Եռասոփեան Յովսէփ Չեկալի, ի Փարիզ :
Եռասոփեան Տիգրան Աղա, ի Կ. Պօլիս :
Երամեան Գեորգ Պէյ, ի Կ. Պօլիս :
Երամեան Կարապետ Աղա, ի Կ. Պօլիս :
Երկանեան Պ. Յոսէփ, ի Փարիզ :

Երկանեան Նիկողոս Աղա, ի Կ. Պօլիս :
Զուրիկեան Խաչատուր Աղա, ի Կ. Պօլիս :
Զօրայեան Նիկողայոս Աղա, ի Կ. Պօլիս :
Էյարեանց Աղափետ Մոսկովի Լօփ-Մաքսիք, ի Մոսքուա :
Էլիկիսգեանց Սարգիս Աղա, ի Կ. Պօլիս :
Էնկիւրեան Պ. Յովնաննուս, ի Փարիզ :
Էնֆիէճեանց Համբարձում Աղա, ի Տիփլիս :
Էրմէրճեան Յարութեան Աղա, ի Կ. Պօլիս :
Ընկերութեան ընթերցասիրաց ի Խասպուշ, ի Կ. Պօլիս :
Թագաթեան Գեորգ Աղա, ի Կ. Պօլիս :
Թանգարան Վերձանութեան, ի Կ. Պօլիս :
Թարիզեանց Ալեքսանդր Աւետիքեան, ի Շուշի :
Թերզեան Վեդան Աղա, ի Կ. Պօլիս :
Թիւրկերեան Բարսեղ Աղա, ի Կ. Պօլիս :
Թնկրեան Յակոբ Աղա, ի Լոնտոն :
Թոգարբեան Ստեփան ի Կ. Պօլիս :
Թովմասեան, ի Ճապ :
Իզմիրեան Պ. Յովսէփ, ի Էրզրար. (5 օրինակք) :
Իսիսեան Կարապետ Աղա, ի Կ. Պօլիս :
Լազարեան իշխանք, ի Փերրուպոլի. (2 օրինակք) :
Լամարբի, ի Փարիզ :
Լորիս-Մեյիքով, ի Փարիզ :
Լուսաւորեան Դպրոց, ի Նիկոմիդիա :
Խաչարեանց Բախշի, ի Տիփլիս :
Խանդամիրեանց Մարտիրոս, ի Շուշի :
Խաչիկ Աղա բարձրման Անգլիոյ ճիւղատոսին, ի Պաղատաս :
Խաչիկեան Կարապետ Աղա, ի Ռոման :
Խաչիկեան Յովնաննուս Աղա, ի Կ. Պօլիս :
Խաչունեան Մանուկ Փիլիպպոս Աղա, ի Կ. Պօլիս :
Խարայեան Գեորգ Աղա, ի Պօլիս :
Խըլքճեան Յակոբ Աղա, ի Նոր Նախիջեան :
Խորասանեան Գեորգ Աղա, ի Կ. Պօլիս :
Խորասանեան Պետրոս Ամիրայ, ի Կ. Պօլիս :
Խուրեան Գարրիէլ Աղա, ի Կ. Պօլիս :
Խորասանեան Պ. Ճիվան, ի Փարիզ :
Խրմեան Տէր Վերապետ Վարդապետ, ի Վան :
Խօնկիւրեան Պ. Գրիգոր, ի Փարիզ :
Կարապետեան Պ. Աւետ, ի Ճապ :
Կարսեն տը Թախ, ի Փարիզ :
Կեսնիցեանց Վերապետ Յարութեան, ի Շուշի :
Կեղիկեան Փիլիպպոս Աղա, ի Կ. Պօլիս :
Կիմիւշեան Գեորգ Աղա, ի Կ. Պօլիս :
Կիմիւշեան Գրիգորիկ Աղա, ի Կ. Պօլիս :
Կիմիւշեան Պ. Կրօնիկ, ի Փարիզ :
Կողպեանց Միքայէլ, ի Տիփլիս :
Կողպեանց Կարապետ Աղա, ի Նոր Նախիջեան :
Կոստանդեան Գրիգոր Աղա, ի Չմուշի :
Կրայեան Պ. Վերապետ, ի Փարիզ :
Կրճիկեան Անդրանիկ Աղա, ի Կ. Պօլիս :
Կրճիկեան Յակոբ Էֆենտի, ի Փարիզ :
Կոյսափեան Թադիկ Աղա, ի Ռոման :
Հանեան Եղիազար Աղա, ի Կ. Պօլիս :
Համամեան Սարգիս Աղա, ի Կ. Պօլիս :
Համարձումեան Ասապոյ Աղա, ի Կ. Պօլիս :
Հաքիմեանց Պ. Նիկողոս ի Փերրուպոլի :
Հերակ Հայկազուն, Իշխան Վրաստանի, ի Տիփլիս :
Հօխիմեան դպրոց, ի Չմուշի :
Ճեզայիրեան Վերապետ Ամիրայ, ի Լոնտոն :
Ճեզայիրեան Արքայի Տիփլիս, ի Կ. Պօլիս :
Ճեզայիրեան Պ. Վանքամ, ի Փարիզ :
Ճեզայեան Թովմաս Աղա, ի Կոմար :
Ճուպերեան Ներսէս Աղա, ի Կ. Պօլիս :
Մակազեան Գրիգոր Աղա, ի Կ. Պօլիս :
Մակարեանց Արսէն Աղա Բարեյոյս, ի Կարին :
Մանանեան Միքայէլ Աղա, ի Փարիզ :
Մանուկեանց Յարութեան Միքայէլեան, յԱզուլիս :
Մանուկ Պէյ, Գրիգոր Ճերման, ի Փարիզ :
Մանուկ Պէյ Յովնաննուս Մուրա, ի Փարիզ :
Մանուկեան Պօղոս Աղա ի Փարիզ :
Մարաքեան Յարութեան Աղա, ի Կ. Պօլիս. (9 օրինակք) :
Մարգարեան Յովնաննուս Աղա, ի Կ. Պօլիս :
Մարգարեան Յովնաննուս Աղա, յԻսկիւտար :
Մարգարեան ց Նիսա, յԱզուլիս :
Մարկոսեան Գրիգոր Էֆենտի, ի Կ. Պօլիս :
Մարտիրոսեան, ի Ճապ :
Մելգոնեան Գեորգ Աղա, ի Նիկոմիդիա :
Մեսրոպեան Վարժարան, ի Չմուշի :
Մելիք Աղա, ի Փարիզ :
Միքայիլեան Թադիկ Աղա, ի Կ. Պօլիս :
Միսաքեան Աւետիս Աղա, ի Կ. Պօլիս :
Միսաքեան Կարապետիկ Աղա, ի Կ. Պօլիս :
Միսաքեան Նիկողոս Աղա, ի Կ. Պօլիս :
Միսաքեան Ճիվան Աղա, Բինկեանցի ի Կ. Պօլիս :
Միսաքեան Վարդգիս Աղա, ի Կ. Պօլիս :



Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

Ա Ի Ե Տ Ա Բ Ե Ր Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ց

Հ Ա Յ Կ Ա Ջ Ե Ա Ն Թ Ա Ն Գ Ա Ր Ա Ն

Հ Ա Յ Կ Ա Ջ Ե Ա Ն Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ի Փ Ա Ր Ի Ջ

Որք միանգամ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՈՅ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՆ ըսուած զիրքն, ու Աղաւնոյս Բ տարւոյն առաջին քերքին մէջ հրատարակուած ընդարձակ հատուածն ուշի ուշով կարդացեր են, գիտեն քէ ինչ պատճառաւ եւ ինչ հոգւով հիմնարկուած էր ի Փարիզ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՋՄԱԼԵՋՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ կոչուած դպրոցը, եւ քէ ինչ իւր դիտաւորութիւնն եւ ինչ արդեօք իրեն վախճանը: Բացուելէն ի վեր երկու տարի է, եւ այն միջոցին իր քաշած բազմատեսակ եւ դառնավիշտ նեղութիւններն, զրպարտութիւնները, հալածանքները, եւ անյաղքելի կարծուած արգելքներն ու խոչընդոտները տեսնողն ու գիտցողը կըզարմանայ արդարեւ մեզի հետ՝ քէ ինչպէս հիմնայատակ կործանելով եւ ոչ փոշին ու յիշա-

տակը մնայու տեղ, այսքան քիչ ժամանակի մէջ այսչափ զարգացաւ այս Վարժարանը, բազմաքիւ աշակերտօք զարդարեցաւ, եւ ողջամիտ ազգասիրաց վստահութիւնը, սերն ու համակրութիւնն իրեն գրաւեց: Չէ, տարակոյս չկայ. արդարասէր միտք՝ որ այս երկու հակառակ կողմանց շարժիչ ուժոյն քաջ խելամուտ եղած ըլլայ, ու երկուքին ալ բռնած այլ եւ այլ սկզբունքն ու յառաջխաղացութիւնը չիով իմացած, մեկուն արտաքին տկարութիւնն եւ ի ժարդկային եպատից անյոյս անօք մնալը տեսած, ու մեկային՝ կողմակցութեամբ ու սրօք եւ բրօք այնքան զօրանալուն, ու ցցուցած ազգի ազգի բռնութիւններուն ակաւատես կամ ականշալուր եղած ըլլայ... ու դարձրէ: աչուրներն ու մէյ մ'այ պարագաներուն ան-

կարծելի կերպով այսքան փոփոխուիլը նայի տեսնե, արդարասէր միտք մը, կրսեմք, չկրնար ջվկայել զարմացմամբ քե՛ս աստուածահաճոյ է այս ձեռնարկութիւնը, հոս Աստուծոյ մատը կայ, Աստուծոյ օրհնութիւնը վրան է :

Եւ յիրաւի . երբ Աստուծոյ ողորմութեան եւ ամենագոր աշոյն հովանին վայրկեան մը վրայէն պակսեր, ո՞վ չզփտեր քե՛ մինչեւ ցայսօր շատոնց եւ լիուլի լցուած էր հակառակորդաց այնչափ փափագածն, ուխտերով, հասարակաց աղօթքներով ու սուրբ պատարագներով (աւաղ...) ու խումբ խումբ սրբակաց մարապետներու յանձնած շերմեռանդութիւններովն ու մահացուցմունքներովը խնդրածն ու պաղատածը՝ իրենց ազգակից եղբարցը դեմ, այն Աստուծմէ՛ որ խաղաղութեան ու սիրոյ է Աստուած, եւ որ հագարաւոր տարիներով առաջ այսպիսի սրբապիղծ աղօթից համար երեսնին զարնելով ըսած էր՝ քե՛ « Խօնկք ձեր պիղծ են ինձ... գպանս եւ գղատարկութիւնս եւ գտօնս ձեր ատեաց անձն իմ... յագեայ եմ ձեօք. յորժամ համբառնայցէք զձեռս ձեր՝ դարձուցից զերես իմ ի ձեռնչ, եւ երբէ յաճախիցէք յաղօթս՝ ոչ լուայց ձեզ. զի ձեօք ձեր լի են արեամբ : » (Ես. Ա. 13-15.) :

Այո, լի են արեամբ այն ձեռքը՝ որ ոչինչ ընդհատ Իսկարիովտացոյ մը շրբունքներէն, նախ անաւոր զենման պատարագին արեւովը ներկեայ եւ քարախեայ, ապա եղբարցն արեան զինը՝ մատնութեան արծաքը, կառնու կըտանի հոգեւոր եւ աշխարհական դատաւորաց, պաշտօնատեարց, գրագրաց, խանութպանից, փաստարանից, լրագրապետաց... ձեռքը կըլնեցընէ, որպէս զի եղբօրը դատապարտութեան վճիռը հանէ . որպէս զի ամեն տեղ հոչակէ տարածէ քե՛,

« Այն մարդիկն որ Մուրատեան վարժարանը
« քիչ մնաց տակն ու վրայ պիտի ընէին, նոր
« դպրոց մը պիտի բանան Փարիզու մէջ կրօնի
« կողմանէ անտարբերեայ եղողներուն համար...
« Միխրարեանք իբրեւ ՁՈՒՏ ՈՒՂՂԱՓՈՒՆ՝ կընառա-
« չեն այս բանիս վրայ, բայց արգիլել չեն կրնար...
« այս միայն կիմացընեն ամենուն՝ որ իրենցը
« (Մուրատեան վարժարանը) ՁՈՒՏ ԿԱՔՈՒԿՆԵՐՈՒ
« ՀԱՄԱՐ է, իսկ անոնցը՝ ԽԱՌՆ ԴԱՌԱՆԱՆՔԻ ՏԷՐ
« ՏՂՈՑ ՀԱՄԱՐ... Ո՛րջափ վախնալու բան է որ երբ
« յանկարծ Մուրատեան վարժարանը Փարիզէն
« փոխադրուի, չըլլայ քե՛ տղայոց ճնողքներէն
« ոմանք ջմօլորին այնէ՛՝ զէքսաստիկփորձութիւն
« մը կրեն նոյն դպրոցին կողմը դառնալու... »

Ո՛վ գիտակցութիւն, ո՞վ խիղճ մտաց, երբոր երկնային լուսով լուսաւորուած աշուրներդ խաւարին, ինչ զարմանք երբ անիրաւութիւնը արդարութիւն երեւայ, մոլորութիւնը առաքինութիւն, չարութիւնը բարութիւն, չարագործութիւնը բարեգործութիւն, նախանձն ու ատելութիւնը սէր, եղբայրատեցութիւնը եղբայրսիրութիւն, ազգատեցութիւնը ազգասիրութիւն...

Ա՛յս է ուրեմն ոգին Քրիստոսի՛ հայածել գեղբայրն մինչեւ եւ ի համբան անդ անուան եորա... Միարանութիւն մը կար որուն առաջին մեծաւորը ուխտով պարտաւորած էր իրեն միարանքը՝ զնայ առաքելաբար ազգին քարոզել ու սովորեցընել զԱւետարանն Քրիստոսի, եւ ծաւալել զյոյս գիտութեան . եկաւ ուրիշ մեծաւոր մը արժանաւոր յաշորդ մը հիմնադրին, ու փոխանակ ազգին ոգեջան քարոզիչներ զրկելու (զորոնք չունենայր շատ անգամ կըխոստովանի) անաւասիկ իր զըրկած քարոզիչները . ստախօս ու անխիղճ բոլոր, զրպարտիչ, չարանախանձ ու անօրէն գրուածներ՝ առ ի խափանել աղարտել եւ զայն բարին՝ զոր այլք գօտեպինդ վառուեր էին կարօտեայ ազգին մատուցանելու, ու անմեղ Սոկրատայ պէս իբրեւ ապականիչս մանկութեան հայածել քշել տալու այն անձինքը, որ այնչափ արդիւնք ունէին (չըսեմ իրեն միարանութեանը մանկուոյն վրայ) ազգին որը տղայոցը համար պատրաստած ընդարձակ տնովը ու մատակարարած հացովն ու զիտութեամբն ու բարոյական դաստիարակութեամբը . որուն համար այնքան տարի անձնանուեր քրտինք էին քափեր իրենք զիրենք մոռնալով, ու իրենց օրինաւոր հանգստութիւնը՝ այն խեղճ տըղոց հանգրստութեանը զոհելով :

Այնչափ չարախօսութիւնք, խարեութիւնք, ու մանաւանդ ազգին խեղճ որբոցը բերնէն կտրած ու ազգին դեմ զրգուելու անձանց տրուած հացկերոյքներն ու ընծաները՝ հարկաւ դիտեայ գեղեցիկ վախճանին պիտի հասնէին: Ի՞նչ զարմանք ուրեմն քե՛ որ երկու տարի ամբողջ այս նոր Վարժարանին հիմնադիրներն ու հոգաբարձուները չկրցան Գաղղիոյ տէրութենէն յանուն իւրեանց Վարժարանը բանալու արտօնութիւնն առնուլ՝ որ ըստ ինքեան իրենց համար ամենաղիւրիւն բան էր, որովհետեւ Գաղղիոյ տէրութիւնը՝ իրենց ուրր տասը տարի Մուրատեան վարժարանին մէջ վերատեսչութեան եւ ուսումնապետութեան բարձր պաշտօններն արժանապէս եւ բազում գովութեամբ կատարելը քաջ գիտեր, եւ հարկադրեցան այն

երկար ժամանակուան մէջ՝ իրենք անտանելի տառապանօք աշխատիլ, ու այն դժուարաքիրտն աշխատանաց փառքն ու պատիւը ստիպուիլ օտարագլոյ մը ընծայելու, որ տերութեան ու հասարակաց առջեւ վարժարանին պաշտօնական վերատեսուցն էր : Բայց եւ ոչ ասով գոհ եղան հակառակորդք. ու այն պատուական եւ անդառնալի ժամանակը գոր պիտի նուիրէին իրենց յափշտակած աշակերտաց բարւոյն համար, նոյնր առատաբար կըրճայէին դռնէ դուռ մէկ պաշտօնատերէն մեկալը իյնալով, ու աշակերտաց տեղ զանոնք հրահանգելով՝ բշնամի ոգւոյն բելադրած հրահանգներովը :

Բայց ոչ. սխալեցանք. այն բարենախանձ դատարակները կըգտնան ժամանակ նաեւ իրենց աշակերտները հրահանգելու, եւ իւրեանց բարոյական ու կրօնական սկզբունքներն ալ անոնց միտքը սերմանելու : — Յիշենք տրուած դաս մը :

Ինքզինքնիս չորսամիս մը առաջ երեւակայինք : Անաւասիկ մեջերեկն իմաստնագոյն, առաքինագարդ եւ ամենէն փափուկ խղճմտանքաւորը.... օր մը լուացուած սրբուած՝ դասարանը կիջնայ, ուր որ տղայքը Դասի կըսպասեն : « Սիրելի տղաքս, այսօրուան Դասս ձեզի ԱՆԵՏԻՍ մըն է տալիք » կըսէ, ու Մովսիսի վարդապետութեան արողը կընստի (Մատթ. ԻԳ. 2-7) : Բարեսիրտ պատանիք որ դեռ անոր որոյ ոգւոյ տէր ըլլալը հասկըցած ու բափանցած չէին, ուրախութեամբ եւ տենջմամբ սրտի կըսպասեն թէ արդեօք Վերապատուելին ինչուրախալիլուր պիտի տայ... եւ ինչ արդեօք լսեր են ալեզարդ ու խոհեմագարդ Վերապատուելոյն բերնէն. « Մեզի հետ ուրախացէք, փնռք տուէք Աստուծոյ » կանչեր է, եւ անդէն ուղիղ խղճմտանքի յայտարար գուարք ցնծութիւն մը երեսին վրայ փայլեր է. շրբունքները բացեր ու աւետաւոր ձայնով մը կանչեր է թէ « Վասն զի ստոյգ տեղէ իմացանք՝ որ վերջապէս, փնռք Աստուծոյ, ալ այս օրերս կըրնելի շԵՐԵՏԻԿՈՍՆԵՐՈՒՆ զպրօցը տերութեան ձեռքով պիտի գոցուի... » Անմեղ պատանիքը Աստուծոյ փառացը համար կանգնուած, ու մարդկութեան օգուտ ընել ջանացող վարժոցի մը կործանելուն Աստուծոյ փառք տալու կըլլորդորէ, ու միտքը անիմանալի կրից ծխովը մըրագնեալ չմտածեր որ գբութեան եւ ողորմութեան Աստուածն այնպիսի փառատրութիւնները չար քան զհայնոյութիւն կըհամարի... :

Անկէց տարի ու կէս մը առաջ իր Գերապայծառ Ընդհանրական եւ Ամենաբացարձակ Աբբանայրն

ալ նոյնպիսի հոգով տղայքը ժողված, — չեմք զիտեր Փրկչին որ խաղաղասէր ու խոնարհամիտ վարդապետութենէն շարժած — բազմարդիւն՝ ու նոյն իսկ ի վանականաց եւ իր հարագատ Գերապայծառ եղբորմէն իսկ թէ բերնով եւ թէ մանաւանդ քերթուածներով ՀԱՅՐ ՈՐԲՈՑ ճանչցուաց, ու յիսուն տարուան արդեամբք լցեալ ծերունի մը օտար դատաստանարաններու մէջ դատակոչ դատափետ ընելով ըրած փառաւոր յաղթութեանն, եւ խեղճ ծերունին իր ՀԵՐԵՏԻԿՈՍՆԱԿՅՅ վարդապետ ընկերովը տեէ դուրս ճամբու վրայ ձգելուն ցանկալի աւետիսը տալու ժամանակը, ազնիւ հայրասէր պատանիք ականջնին զոցեր ու « Վայ գլխուդ, ալիխառն մօրուքէդ ալ չես ամբջնար » կանչելով ձգեր փախեր էին՝ ընդարձակ դասարանին մէջ, — երեւելի հեղինակի մը բացատրութեամբն ըսեմք — չարագոյժ չարագուշակ բուի պէս զինքը միս մինակ բողոյով : Թող այս ամօթալից տեսարանը, ու մանաւանդ արքեպիսկոպոսական վսեմ աստիճանովն ու Ս. Ղազարու պէս անձուկ վանքի մը ՏԵՆՉԵՐԱԿԱՆ ԱՐԲԱՏՈՒԹԵԱՄԲԸ պատուեալ անձի մը կրած այս ծանր (բայց չեմք զիտեր եթէ եւ բոյրովին անարժան) նախատինքը միտքը բերելով ուրախանայ բարեսէր բարենախանձ Վերապատուելին, որ նոյն պատանիք իր անաւոր իշխանութենէն վախնալով՝ իր ԳՍՄՆՆ ալ նոյնպիսի պատասխան մը չեն տուած, բաւական համարելով իրենց տխուր ու վշտացեալ դէմքովը՝ տղայական հասակներէն վեր վսեմ ճշմարտութիւն մը հասկըցընել, թէ ընկճեալ բշնամոյն վրայ ցաւակցիլն ու վերականգնելու ձեռք երկընցընելը՝ քրիստոնէի մը պարտք է, թէ որ ԱՇԻԱՐՀՈՒՐԱՅ ԿՐՕՆԱՌՈՒ ՄԸ չէ նէ... :

Անաւասիկ աստեք են բարոյականին եւ ազգասիրութեան այն դասերն՝ գոր իրենց աշակերտները ստեպ լսելով կըհրահանգին թէ « Ո՞րն է ԿՍԹՈՒՆԿ եւ որն է ՀԵՐԵՏԻԿՈՍ. եւ թէ այս ետքի անունը անբաժանելի ու հոմանիշ ածական մըն է ՀԱՅ անուանը, եւ թէ « անոնց ըրածը ուրիշ բան չէ՝ բայց եթէ գէշ եւ չար. չարը պէտք է ջանալ խափանելու, ուստի եւ իրենց ըրածն ու վաստակածը, որով եւ Աստուծոյ զիմաց մեծ ու արդիւնաւոր գործ մը կըրնենք. եւ թէ որ անոր համար հարկ ալ ըլլայ աշխատիլ յոգնիլ՝ մարտիրոսութեան արդիւնք է ունեցածնիս... : » Անաւասիկ վարդապետութիւն մը, որուն ծայրը աստեօք անաւոր արքայապետութեանց կըտանէր Երոպայի ճիզվիրականները... :

Այս է անհա այն իմաստութիւնը որուն վրայ կը պարծին, եւ յոր, աւնդ, եւ երգութիւն եւ շեռնարկ խոստացան Հոովմայ իրենց աշակերտները կրբելու եւ սովբեցընելու . բայց թէ ինչ իմաստութիւն է ասիկայ՝ բող մեր տեղը Գրիստոսի առաքեալ մը դատէ իր անաչառ բարբառովը . « Ոչ է իմաստութիւնս այս իջեալ ի վերուստ . այլ երկրաւոր, շնչաւոր եւ զիւական . զի ուր հեռ է եւ նախանձ՝ անդ է անկարգութիւն եւ ամենայն իրք չարք . իսկ վերին իմաստութիւնն՝ նախ զի սուրբ է, եւ ապա խաղաղարար, հեզ, զիւրահաւան, լի ողորմութեամբ եւ պտղովք բարեաց, անխիղճ, առանց կեղծաւորութեան, պտուղ արդարութեան . » (Յակ. Գ, 15-18.) :

Բայց արդեօք այս ամենաճշմարիտ դեպքն այ ուրիշ անհամար դեպքերուն պէս (ըստ իրենց ծանուցեալ սովորութեանը) պիտի չստեն չուրանան նորա... մենք այս միայն կըսեմք որ մեկ մը՝ որ առջի անգամը չէ որ ինք զինքն արդարացընելու համար սուտեր կըշինէ հասարակութիւնը խաբելու, այնպիսին արժանի չէ ունկնդրութեան : Բայց երբ դեռ մեկը նոր հաւաստիք մ'ալ կուզէ ունենալ մեր խօսքին ճշմարտութեանը, կրնայ նոյն իսկ այն ազգասեր պատանիէն տեղեկանալ, որ ականջալուր վկայ էր, ու մեզի պատմեց, եւ որ մօտ օրերս Պօլիս դարձաւ . կրնայ ինքը գայրակղելով մեզի պատմածը՝ ազգայնոց ալ պատմել . իսկ երբ մեկ վկայի մը վկայութիւնը դեռ բաւական չհամարուի, ինչպէս որ մեք յայլոց ալ ստուգեցինք, նոյնպէս նաեւ ազգայինք կարող են ստուգել եւ խելամուտ ըլլալ ճշմարտութեան, ու ըստ այնմ այսուհետեւ հաւատս ընծայել չարախօս գրգռութեանց :

Երանի թէ, ինչպէս մեզի խօսք տուող կայ (եւ սիրով կուզեմք հաւատալ, որովհետեւ այն ատեն կըլուսամք որ մեր այս հրատարակութիւնը անօգուտ չըլլար, այլ լիով մեր փափաքելի վախճանին կրհասնի) գէթ այս անգամ անդրադառնար Վերապատուելին, հասկընար իւր այս բռնած կերպին ինչ ձողիէ առաջ գալը, հակառակ քրիստոսական պատուիրանին՝ ընկերոջը չարեօքը չուրախանալ, ու բարոյական եւ աստուածաւանդ պաշտօնին համեմատ՝ անմեղ մանկուսն յառաքինութիւն յորդորել եւ յարգահատանս ընկճելոյ բշնամուտն, այն յայս միայն, եւ ոչ յայլ ինչ : Ո՛հ, ինչ ծանր է Փրկչին մերոյ այս խօսքը « Որ ոք գայրակղեցուցէ զմի ի փօքրկանցս յայսցանէ յիս հաւատացելոց, լաւ է նմա երէ կախիցէ երկան

իշոյ ընդ պարանոց նորա՝ եւ ընկղմեսցի ի խորս ծովու . » (Մատթ. ԺԸ, 6.) :

Գայրակղութիւնը տրուեցաւ . միայն Փարիզ, միայն Վենետիկ, միայն Հռոմ չէ . լսեց զայն բոլոր մեր ազգը . եւ որչափ կըպատկառիմք մեք իր դատաստանէն, այնչափ ալ կըմխիբարուիմք ու կուրախանամք տեսնելով զինքը մեր անմեղութեանն, ուղիղ զիտաւորութեանը եւ ազգասեր փութոյն պաշտպան եւ ջատագով, թէ տպագրութեամբք, եւ թէ մեր ձեռնարկութեանը սատարելով . որով յայտ է թէ լաւ իմացած է թէ այսպիսի հասարակաց գայրակղութեան մը ուժ արժան է Տեառն մերոյ անաւոր ՎԱՅԸ տալ՝ թէ « ՎԱՅ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ Գայրակղութիւն . » (Մատթ. ԺԸ, 7.) :

Ազգիս ուղղատես եւ բուն Հայ մասին մեր վրայ ստացած պատուաւոր կարծիքն, արդեամբք ալ իր գմեզ պաշտպանելովն ըրած դատաստանը՝ մեզի շատ իսկ կըհամարիմք ի պատասխանի այնամենայն զրպարտութեանց՝ զորստութիւնը առ իյաջադել զճշմարտութիւն պէտք էր որ ի ձեռն առնուր : Այն, — տխուր խոստովանութիւն — բամբասուեցանք յեղբւրց մերոց՝ ոչ առաջի Ազգերնուս միայն, այլ եւ առաջի օտարաց . դատափետեղանք առաջի այն հոգեւոր եւ մարմնաւոր իշխանութեանց՝ որ գմեզ դատելու իրաւունք չունին, ինչպէս մեր իրաւունքներն հասկընային : « Ո՞ կացոյց զձեզ իշխան եւ դատաւոր ի վերայ մեր » (Ելից. Ի. 4) հարցընելու ատեննիս՝ անոնցմէ Պիղատոսի տուած պատասխանը կըլսեինք, թէ « Ազգ ձեր եւ ՔԱՀԱՆԱՅՍՊԵՏ մատնեցին զձեզ », եւ մեր վշտացեալ սրտին հրաբորբոք հառաջանքները մեր արտասուացը միակ մխիբարանքն էին..... Ա՛հ, այս պիտի ըլլայ ուրեմն միշտ մեր ազգին անձնանուէր հայրենասիրացը ճակատագիրը, նոյն իսկ ազգայնոց ձեռքով հալածուիլ ու մատնուիլ.....

Հալածուեցանք մեք ալ, ու մեր հալածողներն ու բամբասողները Առաքելոյն հետ օրհնեցինք, կօրհնեմք ու պիտի օրհնեմք միշտ ու պիտի աղօթեմք : Բայց թէ որ երբեմն նաեւ ակամայ հարկ եղաւ որ գրեմք՝ խղճին մերոյ ու մանաւանդ թէ Առաքելոյն ձայնին հնազանդելու համար է որ կըհրամայէ . « Ի բաց ընկեցէք զստութիւն . խօսեցարուք իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում շճԸՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ . » (Եփես. Ա. 25) : Այն, հակառակորդաց քարոզած Ստութիւնը ի բաց ընկենույ, հերքել, ու ճշմարտութիւնը վկայելն է մեր վախճանը .

վկայութիւն՝ չէ ասոր կամ անոր առջեւ, այլ առաջի բոլոր Ազգիս Հայոց, եւ ոչ երբ այոց պէս ծածուկ բղբերով գառանձնականս կուգեմք խաբել ու եղածը քողարկել :

Ո՛հ, ծանր է մեզի այս պարտքը : Սակայն ծանրագոյն եւս վիշտ է մեզ մտածել որ երբ միշտ լուռ կենամք, ու արժանաւոր արհամարհութեամբ մը միայն պատասխանեմք այնչափ բամբասանից գրուածոց ու բղբոց որ մեզի դէմ գրուեցան ու կը գրուին, բայց այն գրուածները կը մնան, եւ թէ որ հիմա գանոնք ընդունողացն ու ընթերցողաց վրայ տպաւորութիւն ալ չընեն ու չըխաբեն (զոր դժուարին կը կարծեմք, մանաւանդ եղածը չգիտցողաց համար) սակայն ապագայից վրայ ուրիշ շատ աւելի մեծ ազդեցութիւն կրնան ընել՝ թէ որ ապագայք անոնց կերպով մը պատասխան մը գրուած կամ եղածը ստոյգ պատմուած չգտնան . վասն զի ապագայք ներկայիս գիտութիւնը չեն կրնար ունենայ՝ երբ ոչ մեր բողոցած յիշատակներովը : Ապա ուրեմն, կը կրկնեմք, ճշմարտութիւնը ըսել, ու անով մեր համբաւոյն խնամ տանիլն է մեր փափագն, ու այս հարկաւորեալ հրատարակութեանցն ալ միակ վախճանը :

Իսկ վրեժխնդրութիւն, քաւ լիցի մեզ ուզել, վասն զի մտքերնուս մեջ է միշտ Մարգարէին աստուածազդեցիկ խօսքը. « Իմ է վրեժխնդրութիւն, եւ ես հատուցից, ասէ Տէր. » ուստի եւ մեր կողմանէ երկնաւոր արդարութեանը բողոյով գհաճոյն եւ զկատարեալն, եւ իբ վրայ միայն եւ յանբաւ ողորմութիւն նորա՝ ինչպէս որ մինչեւ հիմա՝ ասկէց ետեւ ալ միշտ յոյսերնիս խարսխած՝ « Գանգի յուսացեալ եմք երբ տակաւին փրկեսցէ » (Բ. Կոր. Ա.) Սաղմոսերգութիւն հետ կաղօրեմք. « Գատեա, Տէր, զայնօտիկ, ոչք դատին գմեզ... Ա՛ն զգէն եւ զասպար քո, եւ արի՛ յօգնել մեզ... Մեք ի քեզ, Տէր, յուսացաք... զի փրկութիւն մեր ի քէն է... » Ո՛հ ինչ քաղցր մխիթարութիւն էր այն նեղութեանց եւ տառապանաց մեջ այս ու ասոր նման սուրբ Գրոց ու Սրբոց խօսքերն յիշել մտածելով ու իրար քաջալերելով թէ այս է Աստուծոյ, Մարդկութեան ու Ազգի մը նահատակաց կեանքը, ՏԱՌԱՊՊԱՆՔԵՆ ԵՎ ՀԱՆՍՅԱՆՔԵՆ :

Երանի՛ մեզի որ կրնամք հիմա, մեք որ երբեմն այն սրտառուց պաղատանքները կը եկինք արտասուօք, քաղցրագոյն արտասուօք գոհանալ արդ զԱստուծոյ իւր յայտնի խնամակալ ձեռքը մեր վրայ տեսնելով, որ գմեզ ինող կործանեալքս վեր հանեց, կանգնեց ու հաստատեց իբ ամենակալ գորութեամբը :

Յետ այնքան աղետալի անցից այսպիսի անակնկալ յաջողութիւն մը, ոչ մեզի, հապա մեր տառապեալ հայրենեաց բարգաւաճանաց ու վերականգմանը, Աստուծոյ գրութեանն էր միայն հնարաւոր, որ շարժեալ ի բարեխօսութենէ Հարցն մերոց երանելեաց, որոց տառապանացը ամենայն սիրով մասնակից ըլլալ փափաքեցանք եւ կը փափաքեմք, ինչպէս նաեւ մեր տկար կարողութեան ներելուն ջափ իրենց ազգասէր փութոյն եւ եռանդեանը, ինքն Աստուած Գաղղիոյ կայսերութեան ուսման Գերագոյն ժողովոյն, ինչպէս նաեւ հասարակաց ուսմանց պաշտօնեայ Վսեմափայլ Ռուլան ոստիկանին միտքը անկարծելի կերպով լուսաւորեց. իրենց արդարասէր իմաստութեամբը տեսան մեր իրաւացի խնդիրը, մեր ուրը տասը տարուան Փարիզու մեջ անցուցած բազմաշխատ կեանքը քննեցին, կեանք մը՝ որ բոլոր նուիրուած էր ի դաստիարակութիւն եւ ի գրաւոր երկասիրութիւն՝ մեր տկարութեամբը . քննեցին եւ հակառակորդաց անգոր ու ստայօղ փաստերը, եւ զոր ինչ արդարութիւն գոյ ճանչցան՝ մասնաւոր հրովարտակաւ հրաման եւ իշխանութիւն տուին որ կարող ըլլամք ոչ միայն ի Փարիզ, այլ նաեւ Գաղղիոյ ընդ եւ իցէ կողմը հասարակաց դպրոց բանալ եւ ազատօրէն ուսուցանել :

Կընարցընեմք հիմա. ինչ կը պակսէր մեր խեղճ ազգին հակառակորդացը՝ որ լի էին ամենայն յաջողութեամբք, լի ամենայն զօրութեամբ, կարողութեամբ եւ ընչիւք՝ զոր առատ ժառանգութիւն մը իրենց առջեւն էր սփռած, եւ որոց արժան եւ իրաւ կրնար մեկը երեսնին զարնել թէ « Սյէք վաստակեցին եւ դուք ի վաստակս նոցա մտէք » (Յովն. Գ. 38.) . ինչ կը պակսէր առ ի օգնել այն եղկելի հայրենեաց, որոց զիրենք ձեռնտու կը պարծէին եւ կը պատրէին. եւ հիմա ինչ շահեցան ի բամբասանաց եւ ի զբրպարտութեանց ընդդէմ եղբարց իւրեանց. — ապաքէն եւ ոչ ինչ. բայց միայն (եւ վճյ այնպիսի շահուն) զամօք եւ զնախատինս առաջի օտարաց եւ ազգայնոց : Մեր փափաքածն ու խնդիրքը, աւանդ, շատ ծուռ հասկըցան ու կընասկրնան. մեր վախճանը չէր մեր փառքը եւ ոչ առանձնական յաղբանակ մը. հապա Ազգերնուս օգնութիւն ու բարեբարութիւն : Կը տեսնէինք որ մեր դիմացը նախախնամութիւնը ճամբայ մը կը բացուցնէր. եւ նոյն ինքն էր որ յայն գմեզ կը խրախուսէր, եւ « Ես ընդ ձեզ եմ, մի՛ երկնչիք, » կըսէր . կրնայինք մեք խոտորել յաջ կամ յանեակ, քան զոր երկնաւոր մօտը

մեզի կըցուցըներ : Ի՞նչ յանցանք ուրեմն թէ որ սրտի մտօք ի նոյն դիմեցինք, առաքուր հարեալ ամեն մարդկային շահասիրութեանց դիմացելիս կանգնած ու անանցանելի սեպած ամուր պատնէշները :

Թէ որ իրացընէ ազգին օգուտն է եւ ոչ թէ վատ շահասիրութիւն որ մեր հակառակորդներն ալ սոյնպիսի գործի մը կը վարէ, — թեպէտ եւ իրաւամբ կրնամք կասկածել ի դոյն՝ քանի որ կը յիշեմք որ ինչպէս այն անձուկ կղզեկին պատերուն մէջ այս ազգատեսաց ու շահասէր արձագանգները կը կրկնուէին, ու եւս առաւել հիմա անշուշտ կը կրկնուին թէ « Գործնե՛րս եւ որ ՎԱՆԷՔ ԿՈՐԾԱՆԵՑԻՆ... » — ինչո՞ւ ուրեմն այսքան անարգ նախանձ մը ցուցընեն ընդդէմ այնոցիկ՝ որ ատեն մը իրենց կողմանէ եւ իրենց անուանը համար այնքան սիրով կաշխատէին . ինչո՞ւ չուզել որ ազգին տղայքը ջճանջնան ուրիշ դաստիարակ բաց յանոնց որ արեղայական աղափողոնով իրենք զիրենք կը ըմբռնուին... : Թէ որ մենավաճառութիւնը ատելի է յամենայնի, եւս առաւել դաստիարակութեան եւ ուսման մէջ որովհետեւ ուղղակի դաստիարակութեան օգուտն դէմ կելլէ. « Ձիք տարակոյս, կըսէր վսեմափայլ Ռուլան ոստիկանը մօտերս Փարիզու ճեմարանը խօսած ճառին մէջ, չիք տարակոյս որ ալ մենավաճառութիւն չկայ, եւ սովորեցընելու կարողութիւնը ամեն արժանի եղողին կը շնորհուի : »

Վանշ, ինչպիսի յանձնապատան գորութիւն, որ բոլոր ազգի մը, վանաւանդ թէ ըսեմ այսպիսի ամենակարօտ ազգի մը դաստիարակութեանը՝ որ է ըսել Բարոյական, Մտաւորական, Ռուսմակական, Մատենագրական եւ Արուեստական կրթութեանը ինք զինքը միայն բաւական կը համարի...

Մեր վախճանն, ըսինք, ընդհանուր էր, ազգերուս ծառայել . անոր համար թէ որ քիչ մը ատեն հարկադրեցանք մեր առանձին մատակարարութեամբը մեր Վարժարանը յառաջ տանիլ առ ի յաղթել ամենայն խափանմանց եւ ի խրախուսել գահարկելեալ ազգայինս, եկաւ ատենը որ ստուգուի մեծանուն քերթողի մը ըսածը թէ

« Ամենայնի յաղթեաց ժիր շան :

Այնուհետեւ Ազգին նուիրեցինք մեր Վարժարանը, եւ իրաւամբ անունն ալ հաստատեցինք մեր հասարակաց ազգային վսեմ անուամբը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՎԱՐԱՆ :

Գ. Վ. Ա.

Ինեմք հոս նախ գոր ինչ ազգային Մասիս պատուական լըրագիրը այս բանիս վրայ գրեց համառօտի իր 280 թուոյն մէջ : Վերջն ալ աւելցընեմք Վարժարանիս նոր Յայտարարութիւնը, որ մեր ու Խնամակալաց ազգասէր Ժողովոյն համախոհ հաւանութեամբը հաստատուեցաւ :

« Ինչպէս որ արդէն յայտնի է մեր արգոյ ընթերցողաց, Փարիզու մէջ ազգային վարժարան մը ունենալու հարկն ու մեծամեծ օգուտները շատ ժամանակէ ի վեր ճանչցուած էին : Ազգերուս մէջէն կարողութիւն ունեցող անձինք իրենց որդիքը, վեհանձն բարերարներ ալ քանի մը ընտիր բայց չքաւոր պատանիներ նոյն մայրաքաղաքը յուղարկելով՝ անոնց զանազան գիտութիւն եւ ճարտարութիւն սորվեցնելու արդէն փոյր ունեին, բայց գովելի փափարքին, ըստ իմիք անկատար կըմնար՝ քանի որ կը լռեսնէին նոյն պատանեաց հետոս մնալը յազգային կրօնական եւ բարոյական խնամոց, թեպէտ եւ քանի մը տարուան համար միայն ըլլար անոնց պանդխտութիւնը :

« Այս էր անա գլխաւոր պատճառներէն մէկն ալ՝ որով իրաւացի եռանդեամբ եւ ցնծալիցութեամբ ընդունեցաւ ազգերնիս էրէք Գերապատիւ Բազմարդին վարդապետաց մերոց, այսինքն Տեառն Սարգսի Թեոզորեան, Տեառն Գաբրիէլի Այվազովսի եւ Տեառն Ամբրոսիոսի Գալիպոյեան անձնանուէր փոյրք եւ քաջածանօթ հմտութիւնը ի դաստիարակութիւն հայկազն պատանեաց. եւ որպէս զի անոնց հիմնած ու բարեկարգութեամբ ձոխացուցած ուսումնարանը ազգային ըլլալով աւելի հաստատութիւն եւ յարատեւութիւն ունենայ՝ մասնաւոր հրովարտակ խնդրէց եւ ընդունեցաւ անոր համար Բ. Գունեն, ուստի եւ այն ազգասէր վարդապետաց Արեւելեան Բազմալեզու վարժարան անունով բացած դպրոցը Եղաւ Հայկազեան Վարժարան, անմիջական պաշտպանութեամբ Օսմանեան կայսերական դեսպանին որ ի Փարիզ, ընդ խնամօք ազգային Գերագոյն Ժողովոյն, եւ ընդ վերատեսչութեամբ նոյն Բազմահմուտ վարդապետաց :

« Գերագոյն ժողովը՝ ինչպէս յայտնի է, հարկ համարեցաւ մասնաւոր ժողովոյ մը յանձնել Հայկազեան վարժարանին ներքին եւ արտաքին խնամոց եւ մատակարարութեան հոգը, որպէս զի աշակերտաց ընտրութիւնը, դաստիարակութիւնը եւ յառաջադիմութիւնը չըլլապիստի նիւթական եւ բարոյական արգելքներէ՝ որ այսպիսի մեծամեծ գործողութեանց մէջ գրէթ անխորշելի են, եւ որուն փորձն ալ այս օրերս տեսնուեցաւ՝ զանազան անհաճոյ յուրեր պտրտելով նոյն վարժարանին վրայ, որոնց անտեղութիւնը ձիշղ քննութեամբ ստուգուեցաւ : Խնամակալաց ժողովոյ անդամները՝ որ ազգասէր, ուսումնասէր, խոհական եւ անաչառ անձինք են, կը ճանչնան իրենց առած պաշտօնին ու պատասխանատուութեան ծան-

րուրիւնը, և սակայն ազգին իրենց վրայ ունեցած վատամուրհեմէն քաջայերուած՝ ամենայն ննարք ի գործ կը դնեն որ Փարիզու հայկազեան վարժարանը իր ցանկալի նպատակին հասնի :

« Խնամակարաց ժողովին պարտքներ այժմէն Հայկա-

զեան վարժարանին : Յայտարարուրիւնը հրատարակել՝ իբրեւ իր պաշտօնին առաջին գործ. և ահա ի նոյն կը փութայ այսու համառօտ տեղեկութեամբ, պատրաստ ըլլալով պետք եղած կարեւոր փոփոխութիւնները ընելու յօգուտ վարժարանին երբ և հարկը պահանջէ : »



ՀԱՅԿԱԶԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Ի ՓԱՐԻԶ

ԳԼԽԱՒՈՐ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ա.

ՊԱՅՄԱՆՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԱՇԱԿԵՐՏԱՅ.

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻՆ աշակերտները առ հասարակ մեր Հայոց ազգին որդիքը պիտի ըլլան՝ աշխարհիս սր և իցէ կողմերէն ընտրուած :

Աշակերտաց ընտրութիւնը ի Պօլիս Խնամակարաց ժողովոյն մեռօքը, և ուրիշ գլխաւոր տեղեր նոյն ժողովէն պաշտօնական կերպով կարգեալ Գործակարաց մեռօքը կը ըլլայ :

Աշակերտաց տարիքը առ այժմ 10էն պակաս ու 15էն աւելի պիտի չըլլայ :

Ո՛ր և իցէ աշակերտ պիտի ունենայ բարի վարուց և ուսմանցը սկզբնական աստիճանին համար վաւերական վկայական մը՝ գոր Խնամակար և կամ անոնց Գործակալները կը հաստատեն :

Աշակերտաց մեջ երկու կարգ կայ ըստ բոշակի, այսինքն բոշակաւոր և ճրիւղաւոր : Ասոնք որոշելը Խնամակարաց միայն պահուած է :

Թոշակաւոր աշակերտաց տարեկան վճարելիքն է 1800 Ֆրանք, որ երկու անգամով կառնուի, այս-

ինքն պատանույն վարժարան մտած ատենը 900 Ֆրանք,
է. վեց ամսէն 900 Ֆրանք :

Ամսոյն 15էն առաջ վարժարանը մտնող աշակերտին
բոշակը ամսոյն սկիզբէն կը համարուի . իսկ 15էն ետքը
մտնողինը 16էն :

Տարեկան բոշակով վարժարանը կուտայ աշակեր-
տաց ոչ միայն կերակուր է. ուսմունք՝ ըստ սահմա-
նեալ կանոնին, այլ է.

- Ա. Հանդերձից կարկատն ու լուսացրը .
- Բ. Գրի է. գծագրութեան հարկաւոր սովորական
նիւթերը, այս ինքն բուրբ, գրիչ, քանաք է. այլն .
- Գ. Բժշկի է. հիւանդանոցի ծախսերը :
- Իսկ ծնողաց հաշուին մնացածներն են ,
- Ա. Համբուն ծախսը՝ էրբայուն է. գայուն .
- Բ. Առաջին անգամ տրուելու հագուստը (1) .
- Գ. Զուարճալի կամ էրկրորդական ուսմանց է. գե-
ղարուեստից ծախսերը, այս ինքն Նկարչութիւն ,
Երաժշտութիւն , Կարաս, Հէծելութիւն , Մարզք ,
Զինաշարժութիւն է. Լող (2) .

- Դ. Բժշկի է. վիրաբուժի կարգէ դուրս ծախսերը .
- Ե. Ուսման համար պէտք եղած գրքերն ու գործիքները .
- Զ. Նամակագրութեան ծախսերը :

Ամենայն աշակերտ՝ վարժարանը մտնելու ատեն
մէկ անգամ մը միայն կը վճարէ 70 Ֆրանք իբրէս
անկողնի ծախս՝ որջափ ատեն ալ հոն կենայ :

Թէ որ ծնողք ուզեն՝ վարժարանը կը հոգայ տղուն
հագուստները ըստ մասին կամ ամբողջ : Ամբողջ
հագուստը պատրաստելու համար՝ մէկ անգամ միայն
վճարելու է 600 Ֆրանք :

Ծնողք տարեկան բոշակին հետ վեց ամսէ վեց ամիս
կանխիկ կը յանձնեն վարժարանին որջափ ստակ որ
կուզեն տալ իրենց որդուցը մանր ու կամաւոր ծախ-
սերուն համար :

Տղայ մը վարժարանէն էլլելու որ ըլլայ, հաշիւները
տեսնուելէն ետեւ՝ հագուստը ինչ վիճակի մէջ է նե՝
այնպէս կը տրուի իրեն :


Երեք ամիսը սկսելէն ետեւ՝ լմընցած ըլլայ ալ նե,
տղուն վարժարանէն էլլելու ժամանակը եռամսեայ
բոշակը ամբողջ կը վճարուի :

Առանց Խնամակալաց Ժողովոյն առաջուց իմացը-
նելու է. անոր հաւանութիւնը գրով առնելու՝ ծնողք
չեն կրնար վարժարանէն իրենց որդիքն հանել :

Զրիավարժ աշակերտաց ծախսը ազգային Գերագոյն
Ժողովոյն կարգաւորութեամբը Խնամակալաց Ժողովը
կը հոգայ :

Զրիավարժ աշակերտները Խնամակալաց Ժողովը
ազգային դպրոցներուն մէջէն կը նտրէ Ուսումնական
Ժողովին ձեռօքը :

Զրիավարժ աշակերտաց պարտքն է որ ուսմունքին
գովութեամբ լմընցնելէն ետեւ՝ գոնէ երեք տարի ազ-
գային դպրոցներէն մէկուն մէջ վարժապետութիւն
ընեն ջափաւոր բոշակ ընդունելով :



Բ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

Ազգային Լուսաւորչական Հայոց դասնութիւնը
հիմն է Հայկազեան վարժարանին կրթութեանը, է
մասնաւոր փոյր կայ աշակերտաց բարեպաշտ է
բարեբարոյ դաստիարակութեանը վրայ :

Աշակերտաց բով պահապաններ ու վարժապետներ
կան ամէն ժամանակ . մինակ ոչ երբեք դուրս կելլեն,
այլ միշտ վարժապետի մը հետ, ու գիշերը ոչ երբեք
դուրսը կանցընեն :

Ամենայն աշակերտը, բէ բոշակաւորք է. բէ ճրիւ-
վարժք միօրինակ հպատակութեամբ է. առանց արտօ-

(1) Հ Ա Գ Ո Ւ Ս Տ .

- 2 Ջզեստ՝ մուր կապոյտ չուխայէ .
- 2 Տարատ (բանբալուն) նոյն նիւթէն .
- 3 Վերարկու՝ ամառուան նիւթ տան մէջ հագնելու .
- 3 Տարատ՝ ամառնային մուր գունով .
- 2 Գօտի՝ փայլուն կաշիէ .
- 3 Գլակ (ֆեռ) .
- 3 Զոյգ կօշիկ .
- 3 Զոյգ սաւան .
- 12 Երեսօրբիչ .
- 6 Սեղանի անձեռոց .
- 24 Թաշկինակ, 12ը գունաւոր .
- 12 Շապիկ .
- 12 Վարտիք .
- 5 Վզնոց սեւ .
- 24 Գուրպայ, 12ը բրդէ .

5 Վրձին՝ հագուստի, գլխու, սանտր մաքրելու, ակուայի,
ըղունգի. — սանտր, սապուն, կօշիկ հագնելու ոսկր .
4 Արժըք կամ արժարագօծ դգալ, պատառաքաղ, գաւար .
4 Դանակ .
Ճերմակեղենի նշան :

(2) Հ Ո Ւ Ա Ր Ճ Ա Ն Ի Ո Ւ Ս Մ Ո Ւ Ն Ք .

Նկարչութիւն, ամիսը.....	20	Ֆրանք .
Զայնական երաժշտութիւն.....	15	—
Գործիական երաժշտութիւն, Դաշնակ (փիւնօ), Զուրակ (քեման).....	50	—
Հէծելութիւն.....	50	—
Մարզք (ժիմնասօրիք).....	40	—
Կարաս կամ Զինաշարժութիւն.....	20	—
Լող, բոլոր ամառը.....	50	—

նութեան կըննագանդին վարժարանին կանոնադրութեանցը, ըստ բնակութեան, հանդերձից, կերակրոյ, ուսման եւ գրօսանաց : Միայն ստանձին դասառութիւն կամ կրկնութիւն դասուց ուզողները կրնան աւելի վճարքով մը վարժապետ ունենայ :

Մնողք լիւռլի վատանութիւն ունենալով վարժարանին վերատեսչացը վրայ, դրսի անձանց չէն յանձնէր ամենեւին իրենց որդւոց խնամքը :

Երէք ամիսը մէյ մը վկայական կըյուղարկուի ծնողաց՝ Խնամակալաց ժողովոյն մետօք, իրենց որդւոց անողջութեանը, վարքին եւ ուսմանը վրայ :

Վարժարանին մէջ ինչ գիրք որ բերուի՝ վերատեսչին ստորագրութիւնը պիտի ունենայ :

Աշակերտները բոլրակցութիւն պիտի չընեն ուրիշներու հետ՝ առանց վերատեսչաց հրամանին :

Վարժարանին ներքին բարեկարգութեանը համար արդէն գրուած կանոններուն պահպանութիւնը ճիշդ կըպահանանչուի :



Գ. ՈՒՍՄՈՒՆՔ.

Ուսմանց դասախօսութեան մեծ մասը գաղղիարեն եւ բայց ամենայն աշակերտ պարտական է հայերեն դասառութեամբ սովորիլ կրօնական եւ բարոյական կրթութիւն, հայկաբանութիւն, պատմութիւն Հայոց, հին եւ նոր աշխարհագրութիւն Հայաստանի, պատմութիւն ազգային մատենագրութեան :

Ուսման միւս նիւթերն են,

Գաղղիարեն եւ անգղիարեն լեզուք եւ գրագիտութիւն.

Տանկերեն լեզու .

Ընդհանուր հին եւ նոր գրագիտութիւն .

Պատմութիւն հին ազգաց, միջին դարու եւ արդի ժամանակաց .

Աշխարհագրութիւն ընդհանուր, ուսումնական, բնական եւ քաղաքական .

Թուաբանութիւն եւ Հաշուեկալութիւն (Քօնրապիլիքէ).

Երկրաչափութիւն, Արտաչափութիւն, Հանրահաշիւ (Ալժեպր) եւ Եռանկյանաչափութիւն .

Բնագիտութիւն (Ֆիզիք), Բնալուծութիւն (Շիմի).

Շարժաբանութիւն (Սինեմաթիք).

Մենքենաբանութիւն (Մեքանիք) .

Սկզբունք Փիլիսոփայութեան .

Գծագրութիւն (Տրսեն).

Զարդագրութիւն (Օռնըման).

Դիտակագրութիւն (Փէլիգած).

Վիմագրութիւն (Լիթօլիքաֆի) .

Կենդանաբանութիւն .

Տնկաբանութիւն .

Հանրաբանութիւն .

Երկրաբանութիւն .

Քաղաքական տնտեսութիւն .

Իրաւագիտութիւն քաղաքական եւ սոսեւտրական :

Գաղղիոյ Տերութեան բարձրագոյն դպրոցները մտնել ուզող աշակերտը ամենայն պետք էղած դիւրութիւնները կուրենան որ կարենան նոյն տերութենէն սահմանուած քննութիւնները անցընել :

(Ստորագրեալ) Անդամք Խնամակալաց ժողովոյ


- ՊՕՂՈՍ ՎԱՐԳՍՊԵՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ.
- ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԳՍՊԵՏ ՓՈԽԱՆՈՐԳ.
- ՏԷՐ ԳՐԻԳՈՐ ՊԷՇԻԿԹԱՇԻ.
- ՏԷՐ ԱՐԽՍԱԿԷՍ ՍԱՄԵԹԻՈՅ.
- ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ.
- ԿԱՐԱՊԵՏ ԵՐԱՄԵԱՆ.
- ՄԱՆՈՒԷԼ ՆԷՎՐՈՒՋԵԱՆ.
- ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻԻՀԷՆՏԻՍԵԱՆ.
- ՄԿՐՏԻՉ ԱՂԱԹՈՆ.
- ՄԿՐՏԻՉ ՄՈՄՃԵԱՆ.
- ՅԱԿՈՐ ՍԻՐՈՒՆԵԱՆ.
- ՊԵՏՐՈՍ ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ, Նախագահ :

Մանօք. Վարժարանս նամակ գրել ուզող անձինք պետք է՝ այսպէս գրեն հասցեն գաղղիարեն.

COLLÉGE NATIONAL ARMÉNIEN

RUE VIOLET, 60, A GRENELLE.

PARIS.



Ո՞Վ ԻՅԷ ՆՄԱՆ ՔԵՉ ՅԱՍՏՈՒԱՄՍ, ՏԷՐ.

Ոչ. չիք ուրեք, ընտրեալդ յազգաց համայն գոչեցեք, Չիք յախտեանց իրեն. ըզմերս Աստուած այլ ուրեք. Յերկինս ի վեր կատուցեք զաչս յանբաւ խորագին, եւ յայն յանդունդս ի վայր քէ բիրք ձեր բախտեսցին՝ Մանացո՛ւք, յԱստուած ոչ հասին :

Չեզերքք փառաց արկեալ ըզգան իւր յախտենից, Համապարփակ զիւրեւ շուրջ վինք մըշտավառ ցօլից՝ Արտեւանունք նորա չափեն զանսամանութիւն, եւ տիեզերք՝ կետ անկըշիւ առ ոտիւք նորուն՝ Խորասուզին ի ստուեր մանաքուն :

Թե ակնարկէ՝ աշխարհ գայ ի զող, Երկունք զերկինս ունին նորուն ի ճնմ յօտրնիփոխ, Ի հրամանին՝ հաստատութեան խրզեալ բրոչի սիւն. եւ միջոցին համառօտի անձիւր յայնութիւն. Արփիք ըզջան հոսեցուցեալ յայիս խաւարին, Խոժոռաղէմ լերանց ըստուերք յունայն կարկամին :

Թէ տայ ըզձայն աստուածաբարբառ՝
 Երկինք, երկիր, անդունդք ի բունդ կըրկնն զողարար,
 Եւ լըռութիւն փոխանորդեայ պատեաց համարուն .
 Յաւերժախօով այեաց ծովուն սանձեայ յան ի հոյն՝
 Անձուփ անձուռնչ անշարժ համայն այիք՝ փայր ի վեր
 Վիտատափն յանկարժ յընթացսն իւրեանց աներեր,
 Իբրեւ ի շանր փայլակնարափ կենսագրաւ .
 Հրատապ նըժոյզ աճիւնասցի կերպ յարշաւ :
 Թէ զաստուածեան շարժիցէ շըրբունս՝
 Ի զոզ ի տրոփ խոնարնելով լուսատես ակունս .
 Ձուարբոնք յակճիւրս կան մընան անդարձ պատգամաց,
 Եւ լըռութիւն անշըրպետէ ըզձայն նըւագաց :
 Խօսեցաւ Աստուած .

Եւ եռասուրբ վերադառնան զըրուագք օրճներգու
 Հըռչակելով տիեզերաց յանման այելու .
 Չյաւիտենից վեհին կամաց նորոզ յայտնութիւն .
 Նոր շնորհաց ցօղք, այլ տեղային նախ քան զդարս աննուն :
 Ոչ, չիք ուրեք, ընտրեալքդ յազգաց համայն զոչեցէք,
 Չիք յաւիտեանց իբրեւ ըզմերս Աստուած այլ ուրեք :
 Նա զտիեզերս լըրխն ունի յանեակ վերամբարձ,
 Եւ զյաւիտեանս հաստատեալ անդր իսկ ժամանակաց .
 Նա քան զերկինս ի վեր հիմունս արկ անտանձանին .
 Յանուն նորա ոչ հանդուրժին երկիր եւ երկին
 Չի սիրտ մահացուն :

1825

ԹՈՒՂԹ ՎԱՀԱՆԱՅ ԱՐՇԱՐՈՒՆԻՒՅՑ (ՏԵՍՈՒՆ Հ. ՄԻՔԱՅԷԼԻ ՎԱՐԳԱՊԵՏԻ ՉԱՄՉԵԱՆ).

Մեր ազգին մէջ այս տարիներս պատահած եւ մինչեւ հիմա շատին խօսակցութեան ու վիճաբանութեան նիւթ եղած դեպքերուն մեծապէս յարմար կրտեսենք այս ՎԱՀԱՆ ԱՐՇԱՐՈՒՆԻՒՅՑ կեղծ անունովը գրուած նամակը : Այլընձեան Մեծապատիւ Մանուկ աղան, բնիկ պօլսեցի, որ շատ տարիներէ հետո՛ւ Խրիմու Քէֆէ քաղաքը ընտանեօք հանդերձ կըբնակի, եւ իր ազգասիրութեամբն ու իմաստասէր բնաւորութեամբը պարծանք եւ բարի օրինակ է ազգիս, այս գրուածքը ցուցուց մեզի, եւ ըսաւ որ բարեյիշատակ Չամչեան վարդապետին բնագրէն օրինակուած է ամենահաւատարիմ մարդու ձեռքով . իսկ բնագիրը Չալալեանց Սարգիս սրբազանին քովն է : Յիրաւի այ մտադրութեամբ կարդացողը յայտնապէս կրտեսնէ որ ասոր հեղինակը Չամչեանին պէս սրամիտ ու պերճախօս աստուածաբանէն ի գատ ուրիշ մարդ չկրնար կարծուիլ :

Չամչեան վարդապետին սեպհական ոճն էր իմաստուն տրամաբանութիւն, զուարճախօսութիւն, եւ ռամկօրէն գրած բաներուն մէջ տաճկի բառ շատ գործածել . այնու ոճով շարադրուած է ահա նաեւ այս նամակը : Լատին Բաղերայից ու քոյեճի ըսուած յատինահայ քարոզչաց աներկիւղ ախոյեանն էր Չամչեանը, եւ անոնց դեմ ՎԱՀԱՆ ՈՒՂՂԱՓՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՏԻՈՅ ըսուած գրքովը ինչ աստիճանի քաջութեամբ պատերազմած ըլլալը յայտնի է ամենուն . մեր այ ըստ տեղույն յիշատակեր եմք ու պիտի յիշատակեմք : Կրնամք համարձակ ըսել քէ այս գրուածքս այ

այն Վահանին մէկ համառօտութիւնը կրնայ համարուիլ . ուստի եւ խիստ պատշաճ կերպով ստորագրութեանը մէջ ՎԱՀԱՆ ԱՐՇԱՐՈՒՆԻՒՅՑ գրեր է : Իսկ բուականը, որ է 1821, յայտնի կըցուցնէ քէ նոյն տարիները հանդիպած միաբանութեան կամ ջմիաբանութեան կոիւներէն ետքը շարադրուած է : Ըսել է քէ ստոյգ է այն խօսքն որ կըսեմք քէ Չամչեան Հօր ազգասիրութիւնը եւ ճշմարտասիրութիւնը՝ ոչ հասակին ծանրանալովը պաղեր, եւ ոչ իր համարձակախօս գրուածքներուն պատճառած կոիւներովը նուագեր էր : Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառութիւնը մինչեւ վերջի շունչը պաշտպանեց, եւ անոր սգեալ հակառակորդներուն բերանը բանիւ եւ գրով միշտ պապանձեցուց : Միայն քերեւօ ցաւայի է որ Միխիբարեան Միաբանութեան անդամ մնալովը՝ չկըցաւ կամ ջուզեց իր անունը անպատրուակ եւ անփոփոխ զնել ամեն գրուածոցը մէջ, եւ կարծիկ կամ հոռովմեական ժողովրդեան մէջ մնալովը՝ չկըցաւ կամ ջուզեց աւելի համարձակ կերպով գրել Հոռմի պապերուն եւ անոնց պաշտօնէիցը անտեղի եւ անիրաւ պահանջանքներուն դեմ : Այս պակասութիւնը կերեւնայ տեղ տեղ նաեւ այս գրուածքիս մէջ, յորում համառօտ ծանօթութիւններով հարկ համարեցանք այնպիսի կտորներուն մէջ ճՈՒՆ միտքը պարզելու, եւ բարեմիտ ընթերցողները զայրակցութեան առիւթներէն հեռու բռնելու աշխատիլ :

Իսկ ասոր մէջի տաճկերէն բառերը հայերէնի վերածելը աւելորդ աշխատութիւն գիտնալով՝

անփոփոխ բողոցինք, ու միայն փակագծեցինք զանոնք՝ որպէս զի կարդացողը հայերէնի տեղ չառնու :

ԹՈՒՂԹ ԶԶ.

ԱՌ ԱՆԾԱՆՈԹ ԸՍՏ ՄԱՐՄԵՆՈՅ, ԵՒ ՍԻՐԵԼԻ ԸՍՏ ՀՈԳԻՈՅ
Պ. ՕԳՈՍՏԻՆՈՍ ԽԵԳԱԼ.

Այս օրերս բոլորի մը (սուրէք) ընկաւ ձեռքս, որ (կեօյաքի) « Կիրակոս վարդապետ պօյսեցի » անուամբ մէկը ձեր հրամանոցը գրած էր. կարդացի զայն բողոքը, եւ գարմացայ թէ ինչպէս համարձակեր է այդ մարդը որ արեւու պէս յայտնի ճշմարտութիւնը (չամուռով) ծեփել ուզէ : Ինձ այնպէս կըրօւի, թէ ինչպէս մէկ յիմար կոյր մը՝ ինքը գարեւը ջտեսնելովը կըսէ թէ արեգակ չկայ, ասոր պէս ալ այդ գոյեճցին անբժշկելի տեսութեամբ կուրացեալ ըլլալով՝ չիտեսնար եւ չկամիր տեսնել Հայոց եկեղեցւոյն ուղղափառութիւնը, որ ի սուրբ Լուսաւորչէն մինչեւ հիմա հաստատուն ունիմք, եւ վայրապար կաղաղակէ թէ « Հայոց եկեղեցւոյն մէջ ուղղափառութիւն չկայ : »

Եւ թեպէտ անոր բոլորն սխալմունքները եւ ստուրբիւնները յայտնել մեզի հարկաւոր չէր, (չիւնքի) Բեշտիմաչեան Գրիգորին յայտարարութեանը դեմ կըխօսէր, որ եւ ի մայիսի 5 հրատարակէր էր, բայց որովհետեւ Բեշտիմաչեանին յայտարարութիւնը առաջուց կարդացեր էի, եւ ողջմտութեամբ եւ իրաւամբ խօսելուն վերահասու եղեր էի, չկրցայ խապառ համբերել եւ լռել, որ ասանկ գրարան եւ տգէտ նախանձայոյզ մարդու գրած ստապատիր ընդդիմաբանութիւնը տեղի գտնայ (պազի) պարզամիտ ժողովուրդներու քով, եւ ինքն ալ իր տգէտ կուրսութիւնը չգիտնալով՝ յանդգնութեամբ պարծենայ թէ խօսածներս ճշմարտութիւն է, եւ մէկը չկրցաւ (ձեվապ) տալոյ :

Ուստի այս բոլորվս կարճ ի կարճոյ (պէյան) ըրի անոր գրաբանութիւնները, յիշելով իմաստունին խրատը որ կըսէ. « Տուր պատասխանի անզգամին ըստ իւրում անզգամութեանն, զի մի երեսեցի իմաստնագոյն քան զքեզ : » Զայս եւս ծանուցանեմ հրամանոցդ որ այս բոլորի մէջը առաջին մաս, երկրորդ մաս եւ այլն տեսնալու ըլլաս նե՛ չտարակուսիս թէ ինչ են անոնք .

(չիւնքի) այն գոյեճցիին բողոքը երկարաբանութեամբ գրուած էր. մենք զանի քսան մաս բաժնեցինք, որպէս զի որ խօսքին վրայօքը խօսեր ենք նե, եթէ հրամանքդ եւ եթէ ուրիշ կարդացողները (խօյայ) գտնաք :

Առաջին մասին մէջը եօթն արբացի վարդապետաց համար կըգրէ այսպէս թէ « ճշմարիտ հաւատքը (թերկ) ընելով՝ չարափառաց հետ հաղորդակցեր են եւ միաբաներ են անոնց հետ : » Մեկ ազգ մը, մէկ եկեղեցի մը որ ուղղափառ հաւատք ունի եւ կընդունի այն ամէն ճշմարտութիւնը որ Կարողիկէ եկեղեցին Քրիստոսի կըղաւանի եւ կուսուցանէ, այն ազգին եւ եկեղեցւոյն չարափառ ըսողն է չարափառ եւ մոլար : (Լաքին) այս մարդը (եյեր) դառնայ ըսէ (քի) Հայոց չարափառութիւնը այս է որ Հոռմայու արօրին հնազանդ չէ, ինչպէս շատ անգամ կըսէ իր բոլորն մէջ, (գերէ) ինքն ալ ի խղճէ մտաց զիտէ որ Հայոց եկեղեցին չարափառութիւն կամ մոլորութիւն չունի, որ ինքն կարենայ (մէյտան) բերել, անա այս է իր բոլոր խօսքին հիմը եւ (թեմէլը) : Լաքին կըխօսալի (կօր). իր գիտցածին եւ գրածին պէս չէ. (գերէ) եթէ մէկ արեւելեան ուղղափառան ազգ մը, ինչպէս որ մեր Հայոց ազգն է, ջճանչնայ զհայրապետն Հոռմայու իբրեւ յատուկ պատրիարք եւ հովիւ ազգին, եւ այս կերպով ջննազանդի նե՛ տակաւին ուղղափառ է, հերձուածող կամ հերետիկոս չըլլար՝ ինչպէս այդ հակառակասէրը կըկարծէ : Վասն զի շատ է այն ազգին այս ճանաչումը թէ պապն Հոռմայու իբրեւ յաջորդ գլխաւոր առաքելոյն Պետրոսի, է առաջին եւ գլխաւոր հայրապետ եւ վերատեսուչ ընդհանուր եկեղեցւոյ, ինչպէս սահմանեցաւ ի մէջ տիեզերական ժողովոյն Նիկիոյ, Կոստանդնուպօլսոյ եւ Փյոլենտիոյ⁽¹⁾ : Ուստի շատ մեղքըցայ զինքը՝ երբ տեսայ

(1) Ինչպէս որ ուրիշ տեղ, եւ այս բոլորն յառաջարանին մէջ ծանուցինք, Զամչեան Հայրը Մխիթարեան եւ Կարոյիկ մնալ ուզելով՝ գարմանք չէ որ Հոռովմայ պապին *ստաջնութիւնը* չարափառաց կըմեծցրէ, ու ոչ միայն *ստաջին* եւ *գլխաւոր հայրապետ* կանոնանէ զինքը, այլ եւ *վերատեսուչ* ընդհանուր եկեղեցւոյ, եւ վրայ կըբերէ թէ այսպէս սահմանեցաւ Նիկիոյ, Կոստանդնուպօլսոյ եւ Փյոլենտիոյ ժողովներուն մէջ. մինչդեռ յայտնի է որ այն ժողովներուն առաջինն ու երկրորդը պապին *գլխաւոր հայրապետ* անգամ ըսած չունին. իսկ երրորդը, այսինքն Փյոլենտիոյ ժողովը, որուն *տիեզերական* ըսալը իրաւամբ կեղակարծ՝ եւ մեր ազգին գրեթէ *անընդունելի* է. Փյոլենտիոյ ժողովն ալ՝ կըսեմ, Հոռովմայ պապելուն *վերատեսուչ* ընդհանուր եկեղեցւոյ ըսուելու պատիւը տուած չէ ու չէր կրնար տալ :

որ կրցաւի եւ կըսրգայ ասելով այսպէս. « Աւնդ աղետիցս, (հեմ) կարդացի, (հեմ) չացի սրտիս դառնութենէն : » Անոր համար շուտով մը զայս բուզքս իբրեւ բժշկական (նուսխա կամ ուէչէք) գրեցի որ մէջի գրած դեղերը առնէ, եւ սրտի մահաբեր դառնութիւնը դուրս բափէ : (Ձերէ) երէ այնպէս անդարման շատ ժամանակ մնայ նէ, (օյաքի) այն սրտին դառնութիւնը եւ քիւնաւոր մաղձը յանկարծ մահաոխր պատահումը կըրերէ իրեն՝ այս չար եւ դժեղակ ատելութեան եւ կամակորութեան ախտին մէջն (իքէն), եւ այսպէս (հեմ) մարմնոյն վնաս կըլլայ (հեմ) հոգւոյն :

Եւ որովհետեւ այդ մարդոյն հոգեւոր առողջութեանը ցանկացող եմ, զայս խրատս ալ եղբայրական գրով իրեն կուտամ : Յիրաւի իրեն շատ օգտակար կըլլայ այդ լացը, միայն քէ իր կուրութեանը վրայ լայ, եւ յԱստուծոյ խնդրէ ըսելով. « Լոյս տուր Տէր աչաց իմոց, զի մի երբէք ննջեցից ի մահ : » (Ձերէ) ինքն անննարին ատելութեան մահաբեր մաղձը որ ունի Հայոց ազգին դեմ՝ մտաց եւ սրտին մէջը ծածկելով, սաութեամբ Հոռոմայու արոտին ջատագով կըձևւանայ՝ այսպէս գրելով. « (Հիջ) պէտք չէ խօսիլ այդպիսի ամօրալի բարբանջման ». եւ ապա կըղատուայ կըսէ (քի) անոր համար խօսեցայ « Որ չպարծենայ քշնամին հաւատոյ ինքն իրեն ըսելով. (Հեյէ) պապանձեցուցի փափական կողմը : »

Ապաքեն ամեն խոհեմ մարդ կրնայ հասկընալ՝ երէ այն խօսքերը որ այս գոյեճցիք՝ փափական կողմին ջատագովութիւն (տեյի) կըխօսին եւ կըգրեն՝ չափազանց (միտահանէ) եւ գրախօսութիւն է, որով ի մէջ սրբոյ արոտոյն եւ այոց ուղղափառ ազգաց խոռովութիւն եւ երկպառակութիւն կըձգեն, եւ Քրիստոսի ընդհանուր եկեղեցին կըվրդովեն : Հիմա քշնամի հաւատոյ մենք ենք երէ այս գոյեճցիք : Ապա յիրաւի պէտք է խնդրել որ փափական կողմին առ երես ջատագովութիւն ցոյց տուող, եւ իրօք քշնամութիւն ընող այդպիսի չարագրգիւռ մարդերը պապանձին, ոչ քէ Չափարիայի նման, (իլլէ) այն մարդոյն պէս որ քազաւորին հարսնիքը աղտոտ հանդերձով գնաց, ոչ քէ պատիւ մը մատուցանէ, այլ միայն ուզածին չափ ուտէ եւ խմէ, ինչպէս որ սուրբ աւետարանին մէջը գրած է. (քեզայիք) այս գոյեճցիք ալ Հոռոմայու սուրբ եկեղեցին գացեր պատառաքաղութիւն կընեն, այսինքն (չանախ եաղայիճի) են եղեր, միայն քէ անոնց (սայեյեն) իրենց փորը կշտանայ, (մերամնին իճրա) ըլլայ :

Բայց որովհետեւ Քրիստոսի աշակերտացը չիվայեր իրենց քշնամեացը չար խնդրել, (իլլէ) անոնց համար աղօթք ընել եւ բողոքիւն ուզել, եւ դարձին համար զԱստուած աղաչել, որպէս զի հանցէ զսիրտն քարեղէն ի մարմնոյ նոցա եւ տացէ զսիրտ մարմնեղէն, եւ արասցէ զի ի պատուիրանս սիրոյ նորա գնասցեն : Եւ այսպիսի աղօթք (սալք) անոնց օգտին համար չէ, այլ եւ մեր ազգին շատ շահ եւ (Ֆայտա) ունի, (գերէ) կըղադարին մեզի քշնամութիւն եւ վնաս ընելէն, այսպէս կաղաչենք հաւատով խոստովանիմին մէջը ըսելով. « Շնորհեա եւ քշնամեաց իմոց եւ ատելեացս գրողութիւն որ առ իս յանցանաց, եւ դարձն գնոսա ի չարեացն զոր ունին վասն իմ : »

Երկրորդ մասին մէջը կըգրէ այսպէս. « Ի՞նչ (քարգ) ուղղափառ հաւատք է Հայոց եկեղեցւոյն հաւատքը որ այսչափ դարուս մէջ չկրցաւ ճանչնալ Հոռոմայու սուրբ ժողովը, որ միշտ հերձուածող կանուանէ Հայերը. միքէ չէր կրնար ապացուցութեամբ իմանալ ազգին ուղղադաւան ըլլալը, կամ քէ ուրիշ ուղղափառ ազգաց հետ ողջամիտ վարդապետութեամբ համաձայն ըլլալը. եւ երէ պարզ գրպարտութիւն ըլլար նէ՝ չէր կրնար մի վերահաս ըլլար : » Այս կերպ ասութիւնը յայտնի ծուռ եւ խարեական ձեւ ըլլալը ուղիղ դատում ունեցողը շուտով կըտեսնայ :

Գնենք քէ Հոռոմայու սուրբ ժողովը այսչափ դարուս մէջ չէ կրցեր ճանչնալ Հայոց եկեղեցւոյն հաւատքը քէ ուղիղ է, կամ քէ իր գրածին պէս ըսենք, չէ կրցեր ապացուցութեամբ իմանալ ազգին ուղղադաւան ըլլալը : Ասկէց կընետեմի (մի) Հայոց եկեղեցւոյն մոլորադաւան ըլլալը : Օրինակի աղագաւ, եւ չեմ գիտեր քո բարի կամ իմաստուն ըլլալդ. ասկէց կընետեմի (մի) քո չար կամ տգետ ըլլալդ :

(Աճապա) մէկ աստուածային յայտնութիւն մը կամ եկեղեցական վճիռ մը ունի այս բանիս վրայ, քէ որ Հոռոմայու սուրբ ժողովը ապացուցութեամբ վերահաս չըլլայ մէկ ուրիշ ազգի մը ուղղափառութեանը, (իլլաքի) մէկ արեւելեան եռարնակ եւ օտարալեզու ազգ է նէ, այն ազգը չարափառ կըսեպուի : Ի՞նչ պատճառաւ չիմտածեր այդ մարդը քէ Հոռոմայու պակասական ճանաչումը (հիջ) կրնայ (մի) դրականապէս հերետիկոս կացուցանել զայս :

(Հալսը) խօսինք նէ, Հոռոմայու սուրբ ժողովը խիստ դժուարաւ վերահաս կրնայ ըլլալ Հայոց եկեղեցւոյն ուղղափառութեանը՝ քանի որ ասոնց

պես (միւզեվիրներ գուհուր) ըրին, (տայիմ) ազգերնին կըզրպարտեն եւ ճշմարտութիւնը (բախլիք) կրենն : Հոռոմ ոչ հայերէն գիտե՛ որ ինքնին տեղեակ ըլլայ, եւ ոչ մեր ազգը կրնայ հասկըցունել՝ քաղաքական պատճառի համար. եւ Հոռոմ, չէ հասկըցեր (տեյի) միքէ մենք չարափառ եղանք : Ըսենք թէ Հոռոմ չէ կրցեր ճանչնալ մինչեւ հիմա մեր սուրբ Գրիգոր Նարեկացին, սուրբ Ներսէս Շնորհալի հայրապետը, եւ այլ ուրիշ սուրբեր՝ թէ մեր ազգին մեջէն ըլլայ եւ թէ ուրիշ ազգէ՛ թէ սուրբ մարդիկ են. միքէ անոնք անսուրբ եղած կըլլան :

Կամ թէ Ֆռանկաց ազգին եւ սահմանին մեջ շատ սուրբեր եկեր գացեր են, եւ (հայէ) կըգտնուին որ Հոռոմայու ժողովը գանոնք չէ ճանչցեր եւ չէ կրցեր ապացուցութեամբ վերահաս ըլլայ անոնց սրբութեանը. միքէ վասն այնորիկ պիղծ են (մի) անոնք : Հոռոմայու ժողովը տարի մը լման չճանչցաւ Կոստանդնուպոլսոյ սուրբ ժողովը. միքէ այնքան ժամանակ հերետիկոսական (մի) էր. եւ (հայէ) անկեց մինչեւ ցայսօր, որ 1455 տարի է, միայն թէ Մակեդոնի ու Եւնոմիոսի՛ դատապարտութեան, եւ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան սահմանները ճանչցաւ եւ ընդունեց, եւ միւս կանոնները չիճանչեաւ. միքէ Կոստանդնուպոլսոյ սուրբ ժողովոյն միւս չիճանչցած սահմանադրութիւնները հերետիկոսական (մի) կըսեալուին : Նաեւ Հոռոմայի եկեղեցին սուրբ Յովնանէս աւետարանչին Յայտնութիւնը քանի մը հարիւր տարի սուրբ գիրք (տեյի) չճանչցաւ. միքէ պիղծ եւ հերետիկոսական էր այն գիրքը, եւ յետոյ սրբացաւ՝ երբոր սուրբ գիրք (տեյի) ճանչցաւ :

Ճշմարիտ կրնայ ըլլար այդ վճիռը միայն քո այդ բարեկամիդ գրուածին համար որ Հոռոմայու ժողովը գանի չիճանաչեր, եւ նոյն բողոքը ծուռ եւ մոլորական է, բայց ոչ թէ չճանչնալուն համար, այլ ըստ ինքեան է մոլորական եւ ծուռ. (գերէ) Հոռոմայու ճանաչումը կամ ոչ ճանաչումը չիպատճառեր գողոզափառութիւն կամ գմոլորութիւն, որովհետեւ չիպարունակեր գայնալիսի գործս որք կարենան ինմանէ յառաջ գալ, եւ չունի անոնց հետ հարկաւոր կապակցութիւն՝ որք կարենան անկեց հետեւիլ : Ապա այս իւր դրութիւնը ծուռ է եւ խարեական ոճ մը աստրեան. վասն զի գայն ինչ որ չէ այն բանին պատճառ՝ կառնու եւ կըզնէ փոխանակ պատճառի :

(Լաքին) Հոռոմայու արողը կըճանաչէր Հայոց եկեղեցոյն ուղղափառութիւնը մինչեւ մեր կիլի-

կեցի բազաւորաց ատենը, որ շատ անգամ միմեանց հետ բղբակցութիւն եւ սէր կրնէին. եւ անկեց յետոյ եւս՝ մինչեւ ժԳ Գրիգոր պապին ժամանակը. եւ այս ըսածս (սապիք) կընէ նոյն պապին կոնդակը որ գրեց իբրուն Բրիտանոսի 1584, որ անկեց մինչեւ հիմա 257 տարի է. եւ անա այսպես կըսէ.

« Ապաքեն ազգ Հայոց բազմաթիւ եւ իբր ան-
« համար, երեւելի յոյժ հնուրեամբ եւ անուամբ
« առաւել քան գամենայն ժողովուրդս արեւել-
« լեայց, ամենայնիւ գովելի ի փոյք քրիստոնեա-
« կան կրօնից եւ յարիական հաստատութեան...
« Ապա յօժարութեամբ ցանկացեալ մեր ըստ
« ձեռնահաս գոյոյ նպաստամատոյց լինել յոգնա-
« թիւ եւ բարեհամբոյր ազին, առաւելապէս առ
« փրկութիւն հոգոց, եւ առ հաստատուն պահ-
« պանութիւն եւ աճումն սրբոյ կրօնի եւ ուղղա-
« փառ հաւատոյ՝ սահմանեցաք կանգնել առան-
« ձին դպրատուն : »

Անա Հոռոմայու արողոյն վկայութեամբը մինչեւ այն ժամանակը ուղղափառ ենք եղեր, անկեց (պերի) Հայոց եկեղեցոյն մեջը ինչ մոլորութիւն (գուհուր) ըրաւ նէ՛ պէտք է որ գոյեճցիք (պէյան) ընեն. եւ որովհետեւ չեն կրնար, (գերէ) նոյն ուղղափառ հաւատքը ունինք, ապա այսու կերպիւ եւս ուղղափառ է Հայոց ազգը, եւ ոչ բնաւ կրնայ ըսուիլ չարափառ : Նաեւ քանի որ բազաւորութիւննիս բարձաւ, ազգերնիս ցիր եւ ցան եղաւ, խրոխտ եւ այլակրօն ազգաց տակը ստրուկ եղանք, միմեանց հետ բղբակցութիւննիս դաղրեցաւ. ուստի ըսենք թէ Հոռոմ հիմա չկրնար ճանչնալ Հայոց եկեղեցոյն ուղղափառութիւնը. ասկեց կընետելի (մի) որ մենք հերետիկոս ըլլանք :

(Լաքին) կըվկայեմ, երէ Հոռոմ ունենար յարմար եւ կարգաւորեալ միջոցներ, այսինքն հայկական լեզուի ծանօթութիւն կամ հաւատարիմ լեզուագետ անձինք, պարսապ ժամանակ քննութեան, կամք եւ ջանք տեղեկութեան, եւ այլն, յիրաւի կրնար Հայոց ուղղադաւան ըլլալը ճանչնալ եւ վկայել, ինչպէս առաջին ժամանակն կընէր : Եւ (չիւնքի) այս միջոցները չունի այժմ, եւ գոյեճցոց (մնաֆըլխներուն) բողոքերը կըկարդայ եւ իխրիպար) կընէ, ապացուցութեամբ չիկրնար վերահաս ըլլալ իրին ճշմարտութեանը : Եւ ասկեց ինչպէս կընետելի եղեր Հայոց եկեղեցիին մոլորական ըլլալը :

(Շարայարութիւնը յաջորդ թերթին մեջ) :

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն Ա Շ Խ Ա Ր Հ Ա Շ Է Ն Մ Ա Ր Գ Կ Ա Ն

ՖՐԱՆՍՈՒՍ ԱՐԱԿՈՅ.

Այս դարուս առաջին կարգի մեծահոջակ գիտնոց մեկն էր Ֆրանսուա Արակոյ, եւ իր կենցաղօգուտ գիտերովն ու գիտութեանց ըրած մեծամեծ ծառայութեամբքը արժանի է մեր աշխարհաշէն մարդկանց բանգարանին մէջ իր փառաւոր տեղն ունենայ :

Ֆ. Արակոյ ծնաւ 1786ին փետրուարի 26ին Գաղղիոյ Էսթաժէլ ըսուած գիւղաքաղաքին մէջ : Հայրը, որ Փերփինեան քաղաքին փողերանոցին գանձապետն էր, եւ մայրը՝ որ չափաւոր հայրենի ժառանգութիւն մը միայն ունեցեր էր, երկուքն ալ շատ բանէ իրենք զիրենք կըզրկէին, որպէս զի կարող ըլլան իրենց զաւակացը հարկաւոր եղած կրթութիւնը տալ. վասն զի լաւ հասկըցած էին որ երէ անոնք կրթութիւն ու գիտութիւն ունենան, շատ դիւրութեամբ կարող են իրենց ապրուստ ձարել ու նաեւ հարստութիւն դիզել. ուստի եւ ունեցածնին չունեցածնին անոնց կրթութեանը կըծախէին :

Ուրախութեամբ կըտեսնեմք որ մեր ազգին ծընողաց սիրտն ալ բափանցեր է այս ճշմարտութիւնը թէ բարեկիրք եւ գիտուն մարդիկ երբեք անօրի չեն մնար, եւ թէ գիտութեան ու դաստիարակութեան պէս պատուական ու անկապտելի եւ անկորուստ ժառանգութիւն ու գանձ չեն կըրնար ծնողք բողոյ իրենց որդւոցը. ուստի եւ սկսած են հարուստ աղքատ՝ ամենքն ալ իրենց կարողութեանը համեմատ որդւոցը դաստիարակութեանը համար ստակ տալ, ծախք ընել, որ ասկէց քանի մը տարի յառաջ ձրիապէս կրթել տալ անգամ չէին ուզեր, « Ի՞նչ շահ գիտութենէ, դաստիարակութենէ. կրթութենէ ինչ կեցէ ըսելով : » Իսկ հիմա ասոր հակառակ հասկըցեր են որ գիտութեամբ ու դաստիարակութեամբ աղքատը հարուստ կըլլայ, հարուստն ալ տգիտութեամբ ու անկրթութեամբ՝ սրջափ բազմազանձ հարստութիւն ալ ունենայ, շատ անգամ յետին աղքատութեան մէջ կ'իյնայ. եւ երէ ոչ ինքը, գէր իր որդիքը. եւ ասոր սրջափ ցաւալի օրինակներ կըզտանեմք նաեւ մեր ազգին մէջ երէ մեկ մը մտքերնիս նոյն իսկ մեր ծանօթից վրայ տանիմք՝

առանց հեռուները պտըտցընելու : Գառնանք ուրեմն նորէն մեր Արակոյին պատմութեանը եւ տեսնենք թէ ինչպէս իր կրթութեամբն ու գիտութեամբը հարստութեան հետ փառք ու պատիւ ալ ստացաւ, եւ մանկանացու անունն անմահացուց :

Արակոյին հայրը ուզելով զինքը փաստաբան ընել, փաստաբանութեան վերաբերեալ ուսմանց կըպարապեցընէր զինքը. բայց անիկայ օր մը կըտեսնէ որ սպային մեկը քաղաքին պարսպին վրայ կեցած՝ անոր յատակագիծը կըհանէ. անոր ոսկեճամուկ գրատէն (uniforme) աչքը կ'առնուի, կերբայ սպային քովը կըհարցընէ թէ այնպիսի գրատ մը հագնելու իրաւունքն ստանալու համար ինչ ընելու է : Եւ երբոր կըլսէ սպայէն թէ պէտք է Բագմարուետսից Դպրոցը (École Polytechnique) մտնէ՝ որ քանի մը տարիէ ի վեր բացուեր էր, մեկէն կըսկսի հոն մտնելու համար հարկաւոր եղած ուսմունքներն սովորիլ, որպէս զի կարող ըլլայ քննութիւն անցընել : Զափարանութեան դասատու չունենալով՝ մեծ ջանքով ու անխոնջ աշխատանքով ինքն իրեն սկսաւ Այլերի, Լակրանժի ու Լափլասի գործքերը կարդալ. եւ 1805ին թույլուզի բազաւորական դպրոցը դասատու եղաւ : Այն ատեն տասներօրը տարեկանէն աւելի չէր :

Ֆ. Արակոյ 1806ին Պ. Պիոյին հետ (որ տակաւին կենդանի է, եւ վրան յաջորդ բուոց մեկուն մէջ պիտի խօսիմք) տերութեան կողմանէ Սպանիա գնաց միջօրէին ճիշդ չափն առնելու, որ ամենահարկաւոր էր երկրիս ձեւը հաստատելու եւ գաղղիական եորաննար չափուց եւ կշռոց որոշմունք մը ընելու : Հոջակաւոր Տըլամպեր եւ Մեշէն աստեղարաշխք՝ Տոնքերք եւ Պարցելոնա քաղաքաց մէջ եղած երկրիս միջօրէին աղեղը չափեր էին. Արակոյի ու Պիոյին ալ յանձնուեցաւ Պարցելոնայի ու Բալեարեան կղզեաց մէշտեղն եղած միջոցը չափել : Պիոյ 1807ին ապրիլի մէջ Փարիզ դարձաւ՝ ըրած աշխատանքներնուն նախընծան տերութեան ներկայացընելու. Արակոյ հոն մնաց եւ մինակ յառաջ կըտանէր աշխատանքը. բայց այն միջոցին Գաղղիոյ եւ Սպանիոյ մէջ կռիւ բացուելով՝ Մայրքա կղզւոյն բնակիչներն սկսան Արա-

կոյին վրայ կասկածի երբայ, եւ իբրեւ լրտես բռնեցին ու 1808ին յունիսի 2ին Պէլվերի միջնաբերդին մէջ զինքը բանտ դրին: Հոն ալ իր աշխատանքն յառաջ տարաւ Արակոյ, բայց տեսնելով որ կեանքը ապահով չէ՝ փախչելու նայեցաւ, եւ յուլիսի 28ին կարող եղաւ գրուածքներովն ու գործիքներովը նաւ մտնել ձեզայիր երբայու, ուր եւ հասաւ օգոստոսի 5ին:

Անտի քանի մը օրէն Մարսիլիա նաւեց. եւ այն ինչ Գաղղիոյ ծովեզերքը տեսնելով կուրախանար, մեկ մըն ալ յանկարծ Սպանիացոց նաւերէն գերի բռնուեցաւ ու Սպանիա տարուեցաւ: Հոն Արակոյ վաճառական ձեւացաւ, եւ բարեբախտաբար ոչ ոք ճանչցաւ անոր Պէլվերիամրոցին փախըստական բանտարկեալն ըլլալը: Երեք չորս անգամ մեկ բանտէն մեկալը տարուելէն ու կերպ կերպ նեղուրիւններ կրելէն յետոյ նորէն ազատեցաւ, ու նաւ մտնելով՝ դեկտեմբերի 27ին հասաւ ձեզայիրի Պուճա քաղաքը: Հոն ալ նեղուրիւններ պիտի քաշէր Արակոյ. Գաղղիացոց բարեկամ ձեզայիրի տային կամ իշխանը սպանուեր, տեղը Գաղղիացոց քշնամի մը անցեր էր, եւ քող չէր տար որ Արակոն հայրենիքը դառնայ. եւ քե որ Տանիմար քայի հիւպատոսը զինքը չբաշտպանէր, նորէն գերի պիտի իյնար: Վերջապէս 1809ին յունիսի 21ին ձեզայիրէն ալ ազատեցաւ Արակոյ, հասաւ Գաղղիա, եւ անպատմելի ու անակնկալ խնդուրեամբ լեցուց խեղճ մօրը վշտահար սիրտը, որ զինքը մեռած կարծելով՝ հոգւոյն համար հանգատեան պատարագներ ալ ընել տուեր էր:

Գլխուն եկած քշուառուրիւններովը այն դեռահասակ գիտնականը ամենուն սերն ու համակրութիւնը իրեն քաշեց, եւ քիչ ժամանակի մէջ ուսումնական փառաւոր վիճակ մը ունեցաւ: Մարսիլիոյ մաքրատունէն դուրս չելած՝ մեծանուն Հումպոյրէն պատուասիրական նամակ մը առաւ,

որ գիտնականութեան անուամբն ու քաշած նեղուրիւններովը միայն զինքը ճանչցեր էր. եւ յետոյ երբոր անձամբ ալ մեկգմեկ տեսան, եղբայրական սիրով մը կապուեցան իրարու հետ: Վրան հազիւ քանի մը ամիս անցաւ, միաձայն քուէիւք հոգսակաւոր Լաչանտ աստեղաբաշխին տեղը գիտութեանց ձեմարանին անդամ անուանեցաւ. եւ այն ատենը քսանուիրէք տարեկան էր:

Երեք տարի ետքը, 1812ին, Երկայնութեանց Պաշտօնարանը յանձնեց անոր որ Փարիզու Դիտանոցին մէջ աստեղաբաշխութեան դաս տայ, զոր մինչեւ 1845 շարունակեց. եւ զրցուածքին պարզ, ընտիր, գեղեցիկ ու վայելուչ ոճովը գա-

մէնքը զարմացուց: Նոյն Երկայնութեանց Պաշտօնարանին ալ անդամ եղաւ 1822ին երբոր Գաղղիոյ ու Անգղիոյ ծովեզերքն ըրած երկրաբաշխական աշխատանքը լմնցուց փառօք: Գաղղիոյ ձեմարանին կաճառորդ գրուելէն քիչ ետքը Բագմարուեստից Դըպրոցին դասատու եղաւ. եւ 1850ին յունիսի 7ին գիտութեանց ձեմարանը Ֆուրիէի տեղ՝ որ նոր վախճաներ էր, զինքն անուանեց մշտնջենաւոր քարտուղար բնարա-

նական եւ չափարանական գիտութեանց: Այն նոր պաշտօնովը հարկադրեցաւ Արակոյ Բագմարուեստից Դըպրոցին դասախօսութենէն հրաժարիլ:

Յուլիսի յեղափոխութեան ժամանակը (1850) երեսփոխան դրուելով՝ քաղաքականութեան մէջ ալ մտաւ, եւ անունը սկսաւ Լաֆիլի, Լաֆայէրի եւ Յալիսիոն Պառլի անուանցը հետ յիշուիլ. բայց քե Խորհրդարանին եւ քե Փարիզու քաղաքական Խորհրդոյն մէջ՝ որոյ եւ նախագահն էր, գիտութեանց ու արուեստից ծաղկելուն համար ամէն ջանք ըրաւ: Իր յորդորանօքը Տակտին եւ Նիկիսին ազգային վարձատրութիւն տրուեցաւ, որ տակեռատպութիւնն ու լուսագրութիւնը նկարեր էին. նոյնպէս նաեւ Պ. Վիքային որ ջրա-



Յրանուա Արակոյ.

բաշխական շաղխար հնարեր էր : Մեծապես ձեռնտու եղաւ նաեւ Սեն գետոյն նաւարկութեան լաւնայուն, երկարուղեաց եւ Փարիզու պարիսպներուն շինութեանը :

Վերջերը 1848ին յեղափոխութեան առժամանակեայ կառավարութեան ատեն ծովային զօրութեան եւ պատերազմի ոստիկան եղաւ . բայց առողջութեանը ձեռք չտայով՝ ուզածին պէս պաշտօնները կատարել, հարկ եղաւ որ քաշուի : Տկարութիւնը քանի գնաց շաղցաւ, երկկամանց հիւանդութիւնը վրան գորացաւ ու քիչ ժամանակի մէջ բոլորովին զինքն ուժէ ձգեց . անոր վրայ կուրծքի ջրգողութիւն մըն ալ եկաւ, եւ անով յանկարծամահ վախճանեցաւ 1855ին հոկտեմբերի 2ին :

Այսպէս անցաւ այս հոջակաւոր մարդուն կեանքը, որոյ ամեն մեկ խօսքը աստեղաբաշխութեան մէջ մեկմեկ պատգամներ էին : Զօրաւոր եւ հարուստ բնութիւն մը ուներ՝ թէ մարմնոյ եւ թէ մտաց կողմանէ : Սիրող բարւոյն՝ սիրող էր նաեւ փառաց եւ զովեստից . մեծ եռանդով բարեկամացն ու իր պաշտպանեցողը կօզներ, եւ իր ուսումնական ոսոխացը հետ անպարտելի արիւթեամբ կըմըցէր :

Արակոյի գլխաւոր երկասիրութիւններն, ու զիտութեան ըրած մեծամեծ ծառայութիւններն ասոնք են :

Իբրեւ հնարագետ իմաստուն բազմաթիւ երեւելի գիտեր ըրած է Արակոյ : Ինքը գտաւ լուսաւոր ճառագայթից այն յատկութիւնն որ գունաւոր բեւեռականութիւն կըսուի (polarisation chromatique, եւ անոր վրայ հիմնեց բեւեռադետ polariscope) ըսուած գործիքը, որով կըրցաւ յետոյ երկրիս, արեւուն եւ աստեղաց մթնոլորտներուն կազմութիւնը քննել . ասով գտաւ նաեւ շաքարաչափը, որով ճակնդեղէն կամ շաքարաբոյսէն ելած հոյզին մէջ սրջափ շաքար ըլլալը կիմացուի : Լուսոյ վրայ ըրած հանճարեղ հետազոտութեամբը նիւրբին վարդապետութիւնները բոլորովին ջնջուեցան : Ինքը նախ իմացաւ թէ ելեկտրականութիւնը կարող է երկարն ու պողպատը մագնիսել, եւ այս յատկութեան արգասիքն է ելեկտրական հեռագրութիւնը : Հետաքրքրական գննողութիւններ ըրաւ նաեւ հիւսիսայգին մագնիսական ազդեցութեանը վրայ :

Վերը ըսինք թէ զարմանալի պարզութեամբ եւ գեղեցկահիւսկարգաբանութեամբ կըղասախօսէր . անով ալ էր որ ունկնդրացը սիրտն ու միտքը իրեն կըյափշտակէր : Այս ջքնաղ հանճարը կըփայեցընէր նաեւ զիտութեանց ձեմարանին մէջ՝ երբոր եկած նամակաց մեկնութիւնը կըշինէր, եւ կամ առաջարկուած գիտերուն ու գրուածոց վրայ իր կարծիքը կըյայտնէր, ու հեղինակացը վրայ տեղեկութիւն կուտար . ասանկով ձեմարանին նիստերն ու ըրած գործքերը փառաւորեց, եւ բոլոր ձեմարանին վրայ մեծ ազդեցութիւն ունեցաւ :

Այս փառաւոր վկայութիւնը տուաւ Արակոյի դամբանին վրայ նաեւ իր իմաստուն ընկերակիցը Պ. Ֆլուրանս . « Մշտնջենաւոր քարտուղարի պաշտօնին հասնելուն պէս, կըսէր, ձեմարանին վրայ աւելի գործունեայ կենդանութիւն մը երեւցաւ... ոչ երբէք ձեմարանին գործքերն այնպէս գորաւոր եւ մեծ եղած էին : Կարծես թէ զիտութիւնք անսովոր փայլ մը արձակեցին, եւ առատապէս սփռեցին իրենց բարերար լոյսը բոլոր մեր աշխարհիս արգասաբեր աղբերացը վրայ : »

Նոյն կատարելութիւնները կըտեսնուին նաեւ ձեմարանին հրապարակական հաւաքմանցը առջեւ Ֆրեսանելի, Վոյրայի, Եունկի, Ֆուրիէի, Բառնոյի, Ուարի, Բոնտորսէի, Պայլիի, Մոնժի, Անփերի, Փուսոնի եւ ուրիշներուն երկասիրութեանցն ու կենաց վրայ կարդացած տեղեկութեանցը մէջ, ինչպէս նաեւ ուսումնական ծանօթութեանցը մէջ որովք երբեմն ճոխացոյց երկայնութեանց Պաշտօնարանին Տարեցոյցը՝ 1826էն սկսեալ, յորում կըխօսէր բուսոց վրայ լուսոյ եւ եղեամին ունեցած ազդեցութեանը, կլիմաներու ու մշակութեանց վրայ, շոգեգործեաց, արդեսեան ջրհորոց եւ որոտմանց վրայ : Իր խօսակցութեան ունկնդրութեանը պէս գրուածքներն ալ սիրով կըկարդացուին : Վերջի ատեններն երբոր հիւանդութեամբ աչքերը կուրցան, ռամկական աստեղաբաշխութիւն մը սկսաւ քելադրելով գրել տալ . ափսոս որ ժամանակ չունեցաւ իր մեծահոջակ համբաւոյն համեմատ այն գործն աւարտել, որով այնպիսի դժուարիմաց զիտութեան ամենուն զիւրմբունելի դասատետր մը պիտի ունենայինք :

ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԲԱՆՔ

ԲԱՆԱԼԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԵՍՅ .

(Նարայարօրին. Shu էջ 18. 43. 67. 135. 155. 185.)

Ինչէն է որ ջրին եռացած ատենը ամանին նեղ բերանը ալ ջտուլեր :

— Վասն զի Ա. օդին զատուիլ ելլելը կը պակսի. Բ. Պղպաճակները հեղուկին մեջէն անցնելով կը լուծուին .

Գ. Նեղ բերանը շոգիին անընդհատ յորձանքովը կը լեցուի . այսպէս փողին ալ ձայն հանել տուող շունջը միակերպ ու կանոնաւոր հով չէ, հապա փոքորկի պէս քամիի զարնուածք մըն է որ ժամանակ ժամանակ կը փչէ :

Աւելի ինչ պարագաներու մեջ սուլելու ձայներ կը հանէ ջեռուցիչը :

— Երբոր կրակին վրայ դնելու տեղդ՝ կրակին քովը դնես :

Ինչո՞ւ համար ջեռուցիչը կրակին քովն որ դնես աւելի կը սուլէ քան թէ վրան դրած ատենդ :

— Վասն զի տաքութիւնը անհաւասար կերպով կը դաչի ջրին, եւ մեկ կողմը մեկայնեքէն աւելի տաքնալով՝ աւելի ժամանակի ալ կարօտ կը լլայ ջուրն որ եփ ելլէ :

Ինչէն է որ ջեռուցչին նեղ բերանը նորէն կը սուլէ երբոր եռացած ջուրը պաղիլ սկսի :

— Վասն զի առաջ ջրին մակերեսոյրը կը պաղի. եւ օդին պղպաճակները՝ դեպ ի կրակին դարձած կողմերուն մեջ նորէն ձեւանալ սկսելով, յանկարծ յանկարծ նեղ բերնէն դուրս կը ցատքեն :

Եռացած ջրին զանգուածն ինչո՞ւ կ'աւելնայ :

— Վասն զի Ա. ջուրը լեցուն է անհամար պղպաճակներով՝ որ իր զանգուածը կը մեծցընեն .

Բ. Կրակին աւելի մօտ եղած կտորին մեջ ձեւացած շոգին՝ ջրին մեջէն վեր բարձրանալէն առաջ՝ խիստ շատ կը նդարձակի .

Գ. Ջուրը տաքութեամբ կանգայտանայ, վասն զի մասնիկները կը հեռանան իրարմէ :

Ջրին մասնիկներն ըսուելով ինչ կը հասկըցուի :

— Հեղանիւրները շատ մը մանր գետիկներէ

ձեւացած են որ աւազի հատիկներու կը նմանին. անոնք են ջրի մասնիկներ ըսուածները :

Եռացեալ ջրին ծփծրփալուն պատճառն ինչ է :

— Այն ծփալուն ու ալեկոծութեանը պատճառն Ա. շոգին որ զանգուածին մեջէն դեպ ի վեր հրուած ատենը՝ բոլոր ջուրն ալ վեր կը վերցընէ .

Բ. Բուն եռացումը՝ որով ջրին մեկ մասը միայն դեպ ի վեր կը նետուի, եւ այս եռացումը կեցայ՝ երբոր շոգիին ամեն մեկ մասնիկները ջրին մեջ իրենց դուրս ելլելուն արգելք մը գտնելով՝ առջևնին ելած ջուրը պղպաճակ կը դարձընեն ու կը հրեն .

Գ. Այն քրքումունքն որ ամանն ու հեղուկը կունենան՝ երբոր շոգելից պղպաճակները ջրին երեսը կեցեն ու կը ճաքին :

Ինչէն է որ երբեմն եփոցը դուրս կը քափի :

— Վասն զի ջուրը տաքութեամբ կը նդարձակի. ուստի թէ որ կարսան մինչեւ բերանը պաղ ջրով լեցուած է՝ ընդարձակելուն պէս հարկաւ դուրս կը քափի :

Ջեռուցիչ տեսնուած է որ մինչեւ բերանը ջրով լեցուն չէ եղեր, եւ սակայն եփ ելած ջուրը դուրս քափեր է. այս ինչպէս կը մեկնուի :

— Թէ որ կրակը խիստ սաստիկ է, օդն ու շոգին այնպէս շուտով կը բարձրանան որ պղպաճակները ալ չափէ դուրս կը շատնան եւ իրարու վրայ կեցեն, այնչափ որ ջեռուցչին շրքունքէն դուրս կը քափին :

Ինչէն է որ կարը եւ անոր նման հեղուկները ջրէն աւելի դիւրաւ դուրս կը քափին :

Վասն զի տաքցած կարին երեսը բարակ մաշկ մը կը կապէ որ ջրային շոգւոյն վեր ելլելուն արգելք ըլլալով՝ շուտ մը բոլոր զանգուածին ուռելուն պատճառ կը լլայ, զանգուածն ալ ամանէն դուրս քափիլ կը սկսի :

Ինչո՞ւ համար ջեռուցիչ մը որ ջրին եռացած ատենն մինչեւ բերանը լեցուն էր՝ կրակէն մեկզի առնուելէն ետեւ լեցուն չըլլար :

— Վասն զի Ս. եռացեալ ջուրը ջերմութեամբ անգայտացած է, եւ պաղելով կըխտանայ :

Բ. եռացեալ ջրոյն զանգուածը օդոյն ու շոգիին պղպշակներովը կըմեծնայ. իսկ երբոր պաղի, պղպշակները կըտափկին եւ զանգուածը կամփոփուի :

Ինչէն է որ եռացեալ ջուրը ջեռուցչին ծորակին դուրս կըբափի :

— Վասն զի խուփը բող ջիտար որ շոգին դուրս ելլէ. ուստի ջուրն ալ ճնշուելով՝ կըստիպուի ծորակին մէջ ելլելու, — ինչպէս որ օդոյն ճնշումն ալ կըստիպէ սնդիկն որ ծանրաչափին խողովակին մէջ բարձրանայ :

Ի՞նչ է պատճառն որ կարսայի մը մէջ հեղանիւք մը եռացած ատենը՝ կարսային խուփը դղրդում կընանէ :

Շոգին դուրս ելլելու համար խուփը վեր կըվերցընէ, ան ալ իր ծանրութեամբը նորէն վար կիյնայ. այս բանս ետեւ ետեւ շուտ շուտ պատանելով՝ այն դղրդումը կըպատճառի :

Թէ որ շոգին զկարենար կարսային խուփը վերցընել, ինչպէս դուրս պիտի ելլէր :

Կարսան կըճարեցընէր, եւ մեծամեծ վնասներ կընար ընել :

Ինչէն է որ շոգեգործիները երբեմն կըճարին :

— Վասն զի շոգին սաստիկ առաձգական է, եւ իր առաձգութիւնը շատ աւելի կըսաստկանայ համեմատութեամբ՝ քան քէ զինքը պատճառող տաքութիւնը. ուստի քէ որ շոգին տեղ մը չգտնէ դուրս ելլելու՝ պէտք է որ շոգեգործին ճարեցընէ :

Շոգին ջեռուցչին ծորակին ելած ատենը ինչէն է որ ծորակին բերնէն մէկ երկու հարիւրամէրը հեռուն կըտեսնուի :

— Վասն զի բուն շոգին անտեսանելի է, եւ այս բուն շոգին ջեռուցչին ծորակին ու շոգելից ծուխին մէջտեղի միջոցը կըգտնուի՝ մինչեւ որ օդոյն դպչելով խտանայ :

Ինչո՞ւ համար բոլոր շոգին ալ անտեսանելի չէ՝ ինչպէս որ ծորակին անմիջապէս ելածը :

— Վասն զի անտեսանելի մասնիկները օդին դպչելով կըխտանան, իրարու հետ կըխառնուին, եւ ծուխին պէս դիմահար կըլլան :

Շոգին շուտ մը աներեւոյթ կըլլայ. ո՞ր կերբայ :

— Խտանալէն ետքը օդուն մէջ կըլուծուի եւ աներեւոյթ կըլլայ :

Ի՞նչ կըլլայ այն աներեւոյթ եղած շոգին :

— Ս. Կես մը մընտորտին վերի կողմերը կեպէ, եւ ամպերուն բազմութեանը կըխառնուի :

Բ. Կեսմըն այնոյն իսկ օդոյն մէջ լեցուած կըմնայ.

Ինչէն է որ երբոր ջրով լեցուն աման մը՝ ուրիշ ամանի մը մէջ դնես որ անոր մէջ ալ ջուր ըլլայ՝ եփ չեկեր :

— Վասն զի բերանը բաց ամանի մը մէջ եղած ջուրը ոչ երբէք եռացման աստիճանէն վեր կընայ տաքնայ. հեղանիւք մը եռալ սկսածին պէս՝ բոլոր ընդունած ջերմութիւնը կըգործածէ շոգի դառնալու :

Ջրոյն շոգի դառնալը ինչկերպով արգելք կըլլայ ներսի ամանին եռալուն :

— Մեծ ամանին մէջի ջուրը եռացման կետին՝ այս ինքն 100 աստիճանի հասնելուն պէս՝ ձեռացած շոգին մնացած ջերմութիւնը կառնու կըտանի. ուստի ոչ երբէք կընայ այնչափ տաքութիւն տալ ամանին որ անիկայ եփ ելլէ :

Ինչո՞ւ համար երբոր ջրին մէջ շաքար, աղ կամ ուրիշ նիւթ գտնուի՝ եռացումը կուշանայ :

Վասն զի անոնք ջրին խտութիւնը կաւելցընեն. եւ որ եւ իցէ բան որ հեղանիւքին խտութիւնը կաւելցընէ՝ անոր եփ ելլելուն արգելք կըլլայ :

Թէ որ մէկը գուցէ այն կերպով ջուր ուզէ եռացընել որ երկարէ կամ պղծէ ամանին չղպչի ջուրը, ինչ պիտի ընէ :

Պէտք է որ եռացընել ուզած ջրին ամանը այնպիսի ջրեփոցի (bain-marie) մէջ դնէ որ մէջը սաստիկ աղջուր ըլլայ, կամ այնպիսի հեղուկ մը որ ջրին եռալու աստիճանէն շատ աւելի տաքութիւն կուզէ եփ ելլելու համար :

Ինչո՞ւ համար ներսը ամանը եփ կեպէ երբոր ջրեփոցին մէջ սաստիկ աղջուր գտնուի :

— Վասն զի աղջուրը՝ մինչեւ որ ջրին եռացմանը համար հարկաւոր եղած տաքութիւնէն 6 կամ 8 աստիճան աւելի տաքութիւն չունենայ՝ եփ չեկեր. ուստի աղջրին մէջէն կընայ այնչափ ջերմութիւն անցնել որ ներսի ամանը եփ հանէ :

Այս կերպով՝ երբով լեցուն ամանի մէջ որ դըրբի, եփ կեպէ. բայց ոչ երբէք կարելի է երբով լեցուն ամանին մէջ ուրիշ ամանով ջուր եռացընել. վասն զի մէջի ամանին հեղանիւքը պէտք է միշտ այնպէս ըլլայ բնութեամբ որ դրսի ամանին հեղանիւքէն քիչ տաքութիւն ուզէ եռալու համար :

ՁԿՆՈՐՍԻ ԿԱՄ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ.

Աղքատուքիւնը, Դիուփանտ, արուեստից խայ-
րոցն է. ինքն է գմարդիկ աշխատանքի յորդո-

հանգստութիւնը կուգայ եւ գիրենք կարթնցընէ :
եղէզնապատ խրճիթի մը մէջ երկու ծեր



Ձկնորսը կամ Աղքատուքին.

բողբ, վասն զի անոր ետեւէն եկող անտանեկի
նոզն ու մամառքը գաշխատողները գիշերներն
անգամ հանգիստ չեն բողբուր. երբոր խաւարային
ժամերուն քունը քիչ մը աչքերնին կըբոցէ, ան-

ձկնորսներ պատկեր էին, անկողիննին ծովու
ջորցած խոտերէ եր, զոր պատին քով տարածեր
էին : Քովերնին իրենց տաժանեկի արուեստին
գործիքները կային, այսինքն պզտիկ կողովներ,

եղեգներ, կարբեր, ծովու խոտերով ծածկած ցանցեր, լարեր, չուաններ, քիակներ, եւ հինցած հաւակ մը նեցուկներու վրայ կեցած. գլուխներնուն տակն ալ կային խեղճ խսիր մը, զգեստ ու գլխարկներ. եւ անաասոնքէին ունեցած բոլոր գործիքնին, բոլոր հարստութիւննին : Տունը ոչ դուռ ուներ եւ ոչ պահապան շուն. այնպիսի բաներ աւելորդ էին իրենց. իրենց պահապանը աղքատութիւնն էր : Գրացի չուանէին. ծովն իր ալիքներովը չորս դիւն աղքատիկ խճիքնին կըզարներ :

Լուսինն իր ընթացքին կեսը դեռ չէր հասած, աշխատութիւնը որ իրենց անքուն ընկերն էր, արբնցուց գիրենք : Աջքերնէն քունը բօրափեցին եւ սկսան այսպէս իրարու խօսիլ :

ԱՅՓԱՂՈՅ. Բարեկամ, անոնք որ կըսեն քեզիչերներն աւելի կարճ են երբոր Արամազդ ամառը մեզի աւելի երկայն օրեր կուտայ, սուտ կըխօսին : Հազարաւոր երազներ առջնէս անցան, եւ դեռ արշալոյսը չերեցաւ : Միքէ կըսխալիմ : Շատ երկայն է գիշերուան ասպարեզը :

ՈՂՊՈՅ. Ասփաղիտն, ինչո՞ւ այս երջանիկ եղանակս վար կըզարենս : Ժամանակն իր ընթացքը չէ փոխած. հապա անհանգստութիւնն է որ քունդ տակն ու վրայ ընելով՝ գիշերուան ժամերը քեզի երկայն կերելցրնէ :

ԱՅՓԱՂՈՅ. Երազ մեկնել գիտնա : Քնանալու ժամանակս գեղեցիկ տեսիլներ տեսայ, եւ կուզեմ զքեզ եւս անոնցմով ուրախացրնել : Պետք է որ դուն ալ իմ երազներս լսես, դուն որ ինծի արուեստակից ես : Քու միտքդ շատերուն մտքէն վեր է, եւ այն մարդը քաջ երազահան է որ հասուն միտք ունի : Պարապ ժամանակ ալ ունիմք. ուրիշ ինչ կրնամք ընել ալիքներու մօտ տերեւէ անկողնոյ մը վրայ պառկած, եւ քունը աջքերնէս հալածուած :

ՈՂՊՈՅ. Ըսէ ինծի, բարեկամ, գիշերը տեսած երազդ, պատմէ ինծի մանրամասնաբար :

ԱՅՓԱՂՈՅ. Երեկ, բոլոր օրուան աշխատանքն յոգնած դադրած՝ ուշ տանն ալ քունս տարաւ : Ստամոքսս պարապ էր, վասն զի երիկուան կերակուրնիս կանուխ կերեր էինք, ինչպէս որ գիտես, եւ շատ բան մը չուներնք սեղանի վրայ : Երազիս մէջ, ժայռի մը վրայ նստեր ձկները կըղիտէի, յանկարծ կարբիս ծայրը խոշոր ձկներէն մէկը եկաւ բռնուեցաւ : Շունը հաց կըմտածէ, եւ ալ ձուկ : Որսը որոգայքին մէջ բռնուած՝ արիւնը կըվազէր, եւ անոր ծանրութենէն կարբիս

փայտը կըծոներ : Գեպ ի առջեւս խոնարհած երկու ձեռքերս երկընցուցի, եւ այնպիսի բարակ չուանով այնպիսի խոշոր ձուկ դուրս հանելն անկարելի կերեւնար ինծի : Կամացուկ մը խայրեցի որպէս զի ձուկը վերքին ցան զգայ : Վերջը թող տուի որ երբայ, եւ տեսնելով որ ալ չշարժիր, դեպ ի ինծի քաշեցի : Վերջապէս ծովուն եզերքը ոսկիէ խոշոր ձուկ մը հանեցի : Նախ եւ առաջ վախցայ որ չըլլայ քէ Պոսիդոնին սիրելի ձուկ մը ըլլայ կամ կանաջագետս Ամփիտրիտայ գարդը : Կամացուկ մը ձուկը կարբէն հանեցի որպէս զի չըլլայ քէ երկաքը ոսկիի կտոր մը փրցրնէ, հետն առնէ տանի. եւ քիչ քիչ վրաս վստահութիւն գալով՝ քանկագին որսս ցամաքի վրայ դրի : Այն ժամանակն ուխտ ըրի որ մէյմըն ալ ջրին մէջ ոտք չկոխեմ, այլ ծովեզերքը կենամ ու հարուստ մարդու պէս ապրիմ. եւ այն միջոցին արբընցայ : Հնապա, քաշալերէ գիս, բարեկամ, վասն զի քանի որ ըրած ուխտս միտքս կուգայ, կըսարսափիմ :

ՈՂՊՈՅ. Փարատէ սնտաի վախդ, դուն ամենեւին ուխտ չես ըրած, վասն զի ոսկիէ ձուկ չես գտած ինչպէս որ երազիդ մէջ տեսեր ես : Գիշերուան տեսիլքները պարզ խաբէութիւններ են. երէ ջքնանալով կուզես երազիդ մէջ տեսած երջանկութիւնդ այս ափունքը գտնել, ճշմարիտ ձկներ փնտոռ որ կարենաս ուտել. ապա քէ ոչ, ոսկեղէն երազներովդ անօրի կըմեռնիս :

Թեոկրիտես, որ այս քերթուածիս հեղինակն է, Սիկիլիայի Սիրակուսա քաղաքը ծնած է Քրիստոսէ առաջ չորրորդ դարուն վերջերը, կամ երրորդին սկիզբները : Իր ազգատոհմին հայրենիքը Կով կղզին էր : Մօրը անունն էր Փիլնիա, իսկ հօրը Սիմիլոն Պրաքսագորաս՝ որ բժշկութիւն կըներ : Ոմանք կըսեն քէ պգտիկութեան ատեն հայրը զինքը եզիպտոս դրկեր է որ բժշկութիւն սովորի. բայց Թեոկրիտես որ բանաստեղծութիւն շատ կըսիրէր, ամենէն անուանի բժիշկներուն տուած դասերէն վեր դրեր է Փիլեսոսս կովացույն խրատները, որ քերական էր, բանաստեղծ եւ Պտղոմէոս Փիլադելփոսին վարժապետը : Այն ժամանակէն այլ եւ այլմանք քերթուածներ շարագրեց, որոց մէջ Փիլադելփոսին վրայ գովեստ կըխօսի :

Անոնց մեկուն մէջ կըսէ. « Ազատ մարդու մը համար քան զամենայն բազաւորս լաւագոյն է Պտղոմէոս : Խելացի, սիրող Մուսայից, գորո-

վասիրտ, վերջի աստիճանի քաղցրաբարոյ, զինքը սիրողները եւ մանաւանդ զինքը ջսիրողները ճանցող, միշտ այլոց ձեռնտու, ամենուն խնդիրքը կատարող՝ եթէ իր պատուոյն դեմ չեն : »

Իր բոլոր եօթնետասներորդ քերթուածը նոյն բազաւորին վրայ գովեստ է : Եւ սակայն իր վեշտասաներորդ քերթուածին մեջ, զոր Քրիստոսէ 273 կամ 270 տարի առաջ Սիկիլիա դարձած ատենը շինած է ի պատիւ կրտսերոյն Հերոնի, այնպիսի խօսքեր կան որ կարծես թէ Պաղոմէոսին առատաձեռնութեանը վրայ գոհ չէ :

Կրցաւ Հերոն բանաստեղծին սիրտը շահիլ, կամ թէ բանաստեղծը արքունեացմէ ձանձրանալով հեռացաւ, ու կրցաւ ազատօրէն իր միտքը բացատրել՝ ստոյգ չեմք գիտեր : Այս միայն յայտնի է, որ զուարճութեան համար Ասիա եւ Յունաստան ըրած քանի մը ճամբորդութիւններէն զատ՝ կենացը մնացած օրերը խաղաղութեամբ Սիկիլիոյ մեջ անցուց : Հոն իր քերթողական սքանչելի նկարագիրները շարագրեց, որ յետոյ Վիրգիլիոսին օրինակ եղան, եւ որոց գեղեցկութիւնն ու անուշութիւնը անցնող մը չեղաւ : Երբեմն Թեոկրիտէսն անուանեցին « Հոմերոս հովուերգակ քերթողութեան » : Եւ անոնք որ յունարէն գիտեն, Թեոկրիտէսին ոտանաւորները կարդալով կիմանան թէ այդ գրուցուածքին մեջ չափազանցութիւն չկայ :

Թարգմանեաց ի գաղղիականէ

Խ. Պ. ՕՏԵԱՆ

Աշակերտ Հայկազեան Վարժարանին
որ ի Փարիզ :

ԱԻՐԻՉԱՆ.

Աղքատ պարտիզպանի մը Վարդուհի անունով աղջիկը հիւանդ պառկած էր. Տիգրանունին որ գեղի գզիրին աղջիկն էր, ամեն օր իրեն գաւաթ մը մսի ջուր կը բերէր, որովհետեւ խեղճը ուրիշ բան չէր կրնար ուտել :

Երբոր Վարդուհին առողջացաւ, ըսաւ ինքն իրեն .

— Հիւանդութեանս ժամանակ ճրջափ վրաս գուրունեցաւ այն սիրելի աղջիկը. մսի ջուրը միշտ անձամբ կառնէր կը բերէր : Ո՛ւր էր թէ կարենայի իրեն մեկ մեծ ծառայութիւն մը ընել, կամ գէթ փոքրիկ զուարճութիւն մը պատճառել :

Օր մը իմացաւ որ Տիգրանունին Եսթրիզան ծա-

ղիկը շատ կը սիրէ, մայիս ամսոյն առաջին օրէն սկսեալ ամէն առաւօտ անտառը կերթար Եսթրիզան փնտռելու, որպէս զի իր բարերարին փունջ մը շինէ անկէց : Երկար ժամանակ փնտռելէն յետոյ անտառին խորը հինաւուրց կաղամախի մը քով առատ Եսթրիզան գտաւ. նստաւ գեղեցիկ փունջ մը շինեց, դաւար տերեւներով պատեց, եւ ուրախութեամբ ճամբայ ելլելու որ կը պատրաստուէր, յանկարծ երկու աւազակի ձայն առաւ, որ մօտակայ բուփերուն մեջ պահուրտած՝ իրարու հետ կը խօսէին :

— Վերջապէս ժամանակն եկաւ, կըսէր անոնցմէ մէկը, որ եղբօրս բանտարկութեան վրէժը գզիրէն առնում. անա տանը բանալին, աղախինը դուրս ելլելու ժամանակ վրան մոռցեր էր :

— Շատ բարի, պատասխան տուաւ անոր ընկերը. այս իրիկուն կերթանք գզիրը, կինն ու աղջիկը կը սպանենք, ստակներն ալ կառնենք կերթանք :

Վարդուհին սարսափած՝ կամացուկ մը ելաւ փախաւ, տարաւ շինած փունջը Տիգրանունին տուաւ ու չարագործաց խօսակցութիւնն անոր պատմեց : Իրիկունն դեմ գզիրը ծածուկ շատ մը զինեալ մարդ բերաւ տանը մեջ պահեց : Կես գիշեր ըլլալուն պէս՝ իրացընէ աւազակներն եկան, դուռը բացին. բայց երկուքն ալ մեկէն բռնուցան, իրենց յանցանքին համեմատ պատժուցան :

Այն ժամանակ գզիրն ըսաւ աղջկանը. — Սիրելի որդեակ, ըրած ողորմութեամբդ Աստուծոյ օրհնութիւնը մեր տանը վրայ իջաւ : Դուն խեղճ Վարդուհին քիչ մը մսի ջրով առողջացուցիր, եւ անիկայ Աստուծոյ ողորմութեամբը ամենքնիս ազատեց մահուրէն :

Մի քըշուատին հաց զըլասցիս

Յորժամ ի քէն հայցիցէ.

Դուցէ վաղիս. նովիմք գերծցիս

Յանձկութենէ ինչ մեծէ :

Շէնքի մը գարդերը կամ կատարումը կրնայ ուշացուիլ, բայց տղայոց ուսմունքն ու կրթութիւնը չկրնար ուշացուիլ : Օր մը իրենց որդւոցը ինչ պատասխան պիտի տան այն ծնողք, որ անոնց անգին ժամանակը անհոգութեամբ կը բողոն որ պարսպ կամ զուարճութեամբ ու զբօսանքով անցնի :

ՓԱՐԻԶԵԱՆ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ՆԱՄԱԿ.

Կոստանդնուպօլսոյ մէջ ազգիս երեսփոխան (յօղօֆէր) Մեծապատիւ Մարկոսեան Գրիգոր Էֆէնտիէն հետազայ նամակն ընդունեցանք առ Գերապատիւ Սարգիս վարդապետ մեր ուղղեալ, զոր մէջի ազգասիրական եւ մարդասիրական գեղեցիկ զգացմանը համար արժան կը համարիմք անբերի հրատարակել :

« Կոստանդնուպօլսիս, 50 օգոստոսի 1857 :

« Արժանապատիւ Հայր,

« Յերջանիկ օրէ անտի, յորում գովելի սեր առ ազգն՝ դարձուցեալ զձեզ (զոյգ ընդ Տ. Գաբրիելի եւ Տ. Ամբրոսեայ վարդապետաց) ի ծոց հայրենի եկեղեցոյ, այսինքն առաւել մերձեցուցեալ զարժանապատուութիւնսդ առ մեծագոյն կամ բուն մասն հայրենակցաց՝ զպատուական անձինս ձեր ի ծառայութիւն նմին նուիրեաց, կամք էին իմ եւ պարտք իսկ գրութեամբ եւս (որպէս սրտիս) շնորհաւորել զգալուստ ձեր եւ շնորհ ունել ձեզ երեցունցդ՝ վասն անգին ծառայութեանդ, որ մեծամեծ բարիս ունի ծնանել յօգուտ ազգիս : Բայց բազմութիւն ազգասիրաց որք ի բողոքակցութիւն անապարեցին (որպէս եւ արժանն էր) ընդ Գերապատիւ Տեարսդ, երկիւղ երեւելոյ ցանկացող ի ձեռս բերելոյ անարժանաբար զանուն ազգասիրի, եւ միանգամայն երկիւղ գրաւելոյ բերեսս զփոքրիկ անկիւն մի ի զանձարանի մտացդ, եւ հետեւաբար յափշտակելոյ զբանի ինչ ի բանկազին վայրկեանից եւ խոչընդոտն լինելոյ օգտակարագոյն զբաղմանցդ, յետս կացուցին զգրիչ իմ ցայսօր յասպարիգէ քարտիզի :

« Իսկ արդ՝ փնտք էին տեսեալ զձեզ զերծ ի մտատանջութեանց որք ի շնորհս ներքին եւ արտաքին բշխմեաց յուզիւն զձեզ, ազատ միանգամայն՝ բէ եւ մասամբ իւրք եւեր՝ ի դժուարութեանց որք սովորաբար անբաժանելի են ի սկզբնաւորութենէ ամենայն մեծ ձեռնարկութեանց, նա մանաւանդ՝ ուրախս զձեզ՝ ոչ նուազ քան զձեզ՝ այժմ երեսակայեալ ընդ փրկութիւն Տ. Խորենայ վարդապետի ի պապական ստրկութենէ, եւ ընդ ժիր աշխատակցութիւն նորա իւրում Հարազատի՝ ի կրթութիւն հայրենակից մանկտանոյն,

ոչ եւս կարեմ յապաղել ընդ երկար զգրութիւն իմ :

« Ըստ ինքեան գովելի եւ մեծի շնորհակալեաց արժանի եւ անձնանուէր ազգասիրութիւնդ. որով զամենայն ինչ զոնելով եւ յինչ ոչ խնայելով՝ զօգուտ հայրենեաց վերադասեցիր ամենայնի :

Գուցէ ոչ սակաւ դժուարացեալ իցէր ընդ ոչ ժամանումն առ ձեզ անյապաղ բոյորից նպատիցն, որոց իրաւամբ ակն ունել էր ձեզ բնականաբար յազգես մեծէ. եւ յիրաւի, միոյն եւեր ի մեծատանցն մերոց մարք էր միայնակ տանել ամենայն ծախուց ազգօգուտ ձեռնարկութեանդ, բայց առ ի գրաւել յայն զսիրտս իւրաբանչիւրոց ազգայնոց եւ զամենեսին մասնակիցս առնել արգասեացն յուսացելոց, լաւ եւս համարեցաւ առժամանակեալ նեղութիւն եւ անձկութիւնդ, զիտելով միանգամայն զի քաջութեամբ ունիր համբերել այնմ : Նա զի ոչ մեծ ինչ կարէր համարել յաղբանակդ՝ երէ ամենայն դիւրութեամբ եւ հեշտութեամբ ի ձեռս բերէիր զայն՝ առանց դժուարութեանց եւ նեղութեանց որոց տարալորդ ցարդ եւ տանիլ ունիր բերեսս փոքր մի եւս :

« Ժողով խնամակալաց արդէն հասոյց առ ձեզ գումար մի դրամոյ արտաքոյ կարգի : Մարդասիրական ընկերութիւն մի եւս կազմի այժմ վասն առաքելոյ ի վարժարանդ տասնեակ մի աղքատիկ աշակերտաց : Առ երեսելի վիճակս հայաբնակս գրեցաւ ի դիմաց Գլխոյ ազգիս զի իւրաբանչիւր ըստ կարեացն զմի կամ զերկուս աշակերտս տացեն բոշակաւորս : Այսորիկ անօրէնութիւնք տան մեզ յուսալ բէ նախ քան զլրանալ վեցից ամսոց ամենայն նեղութիւնք ձեր փարատեցին, եւ զպտուղս աշխատանացդ քաղել սկսեսջիր : Են նաեւ ի պատրաստի քանի մի աշակերտք որք յետ քանի մի Եօթնեկաց ուղեւորեսցին այլր :

« Ի վերոյ գրելոցս յայտնի տեսանք բէ ոչ ննջեն աստ, ուստի եւ քաջալերեցարնք : « Որ ծանրաբայլ զնայ անվտանգ զնայ, եւ որ անվտանգ զնայ՝ հեռի զնայ » ասէ առական :

« Մեծաւ ուրախութեամբ լսեմք յամենայն եկելոց այտի այսր զբարեկարգ ընրացս վարժարանիդ զորոց յարատեւութիւն յուսամք լսել միշտ :

մակին վրայ եղած հասցեով իմացեր է Պ. Ա...ին տունը, եւ շիտակ առեր հոն բերեր է որ իրեն յանձնէ :

Պ. Ա. ի նշանակ երախտագիտութեան իւրոյ՝ Մարիամին տարին 500 ֆրանք եկամուտ կապեց, 500 ֆրանք ալ տարեկան վարձք խոստացաւ քէ որ քովը ծառայութեան մտնէ : Ահսոս որ խեղճ աղջիկը ջկրցաւ երկար ժամանակ իր նոր բաղդը վայելել. կարճատե հիւանդութեամբ մը վախճանեցաւ : Բայց Պ. Ա. իր երախտագիտութեան պարտքը Մարիամին մահուամբը հատուցած ջհամարելով՝ անոր կապած եկամուտը աղքատ մօրը վրայ դարձուց, որպէս զի մինչեւ մահը հանգիստ ապրի, եւ այնպիսի առաքինի գաւկի մայր ըլլալուն վրայ ուրախանայ :

Մարիամին նման առաքինի ու արդարախոն անձինք ճրջափ սակաւաքիւ են, որ այսպիսի դիպուածոց մէջ իրեն պէս մտածեն ու գործեն :

ՄԵՆԻ ԱԵՐԱՆ ՅԱՅՈՒՆԷ. — Սարտենիոյ տէրութիւնը Իտալիոյ Գաղղիոյ հետ ունեցած հաղորդակցութիւնը դիւրացրնելու համար շատոնց կրփափաքեր Սընի կամ Կենետոս ըսուած լեռը ծակել. եւ իւր այս գովելի եւ բազմօգուտ փափաքն ի գործ դրաւ ամսոյս ձին փառաւոր հանդիսիւ, զոր այսպէս կըստորագրէ *զաղղիա-խտայական Ստրնանդակ* կոչուած օրագիրը :

« Ըստ բազում գլխոց օգտակար դիպուած մը, մանաւանդ անոր համար որ Գաղղիոյ եւ Իտալիոյ յարաբերութիւններն աւելի պիտի շատցընէ, կատարեցաւ սեպտեմբերի 1ին. կուգեմք խօսիլ Սընի լեռան ծակուելուն առաջին ականին ճաքելուն եւ Վիկտոր-Էմմանուէլ երկաթուղոյն նաւակատեացը վրայ : Այս երկաթուղին ճշմարիտ Գաղղիա-Իտալական գիծն է, որով եւ ամենէն աւելի մեր մտադրութեանն արժանի :

« Այս հանդէսն իր օգտակարութեանը վայելուց մեծաշուք հանդիսիւ կատարեցաւ, եւ Վիկտոր-Էմմանուէլ քաղաւորն ու Նափոլէոն Իշխանը, Պ. Բավուր, Պ. Փալեոքափա, Պ. Նէկրի եւ այլ մեծապատիւ անձինք ներկայ էին :

« Սընի լեռան ստորոտը դրած էր ելեկտրական գործիք մը, եւ 800 մեքր երկայնութիւն ունեցող քելովականներուն պատրոյզներուն հաղորդուած էր, որ հսկայածե ստորուղոյն առաջին քարը պիտի ցատքեցընէին : Երկու ելեկտրական քելերէն մէկուն Վիկտոր-Էմմանուէլ քաղաւորն ու միւսոյն Նափոլէոն Իշխանը կրակ տուին, եւ գործողութիւնը ամենայն յաջողութեամբ կատարեցաւ :

« Սընի լեռան ծակուիլը արդի գիտութեան ամենէն զօրաւոր եւ ամենէն փառաւոր գործոց մէկը պիտի ըլլայ : Տնտեսութեան կողմանէ ալ մեծամեծ պիտի ըլլան իւր արգասիքը, վասն զի Սաւոյիոյ ձորերուն եւ Փիեմոնթի դաշտերուն մէջ տեղն եղած օարերը կամ բարձրութիւններն 800 մեքր ցածընելով՝ վաճառաց փոխադրութեան մէջ իւրաքանչիւր տակառաջափին 50 ֆրանք խնայութիւն պիտի մատուցանէ . Լոնտրայի, Փարիզու, Ճինեւրայի, Թուրինի, Միլանի, Ճենովայի եւ Իտալիոյ ամենէն զուարճալի եւ կարճ ճամբան ալ ուղեւորաց առջեւը պիտի բանայ :

« Ստորուղոյն երկայնութիւնը պիտի ըլլայ 12 հազարմեքր. քուարցի եւ գաճի կարգերուն մէջէն անցնելուն համար փորուիլը մեծ աշխատանքի կարօտ է, ուստի եւ ճարտարահնար եւ զօրաւոր ջրաբաշխական մեքենաներ ի գործ պիտի դրուին : Այս հրաշայի ձեռնարկութիւնը եօքը տարուան մէջ պիտի լմրննայ, եւ քառասուն միլիոն ֆրանք պիտի երթայ, Սարտենիոյ տէրութիւնը քսան միլիոն պիտի տայ . քսան միլիոն ալ Վիկտոր-Էմմանուէլ ըսուած Ընկերութիւնը : »

ՆԱԽԱՊԱՇԵՐՈՒՄԸ. — Գաղղիացոց ռամկին կամ հասարակ ժողովրդեան մէջ ուրբաք օրուան վրայ եղած նախապաշարմունքը փոքր ի շատէ Յուլիսի քերքին մէջ յիշատակեցինք. բայց ուրիշ շատ պաշարմունքներ ալ կան, որ գուցէ եւ ոչ մեր ամենատգեա սեպուած հասարակ ժողովրդեան մէջ կը գտնուի. անոնցմէ մէկը միայն յիշեմք որ նոր այս օրերս պատահեցաւ : Գեղի մը մէջ կայծակէն տուն մը կըրոնկի. կրակը տեսնելուն պէս յիսուն հոգի կըվազեն, օգնութեան կուգան. բայց երբոր կիմանան քէ կրակը երկնքէն իջած է, մէկէն մտքերնին կուգայ այն մուար կարծիքնին քէ երկնքէն իջած կրակը չմարիլ, եւ ո՞վ որ մարելու կաշխատի, նոյն տարւոյն մէջ կըմեռնի, ամենքը կըքաշուին կերբան . այնպէս որ գեղին գգիլը երբոր վրայ կըհասնի, հազիւ տասը հոգի կըգտնէ, եւ անոնց անձամբ ցուցընելով որ երկնքի կրակն ալ կրնայ մարիլ, բռնութեամբ քիչ մը ձեռնտրութիւն կըգտնէ խեղճ տունը բոցերու կատաղութենէն ազատելու :

Proprietaire-gerant : A. LACHAT

Ի ՓԱՐԻԶ, Ի ՏՊԱՐԱՆԻՆ ՍՐԱՄԵՅՆ.

խաչեան Եղբարք, ի Փարիզ :
Խաչեան Պ. Վ. Աստփան, ի Կ. Պօլիս :
Իրիմանեանց Հաքար, ի Տփլիս :
Իսկենտիսեան Վարտիրոս Աղա, ի Պօլիս :
Իսկենտիսեան Յովհաննէս Աղա, ի Կ. Պօլիս :
Կրեան Սարգիս Աղա, ի Կ. Պօլիս :
Կրտիչեան Խաչիկ Աղա, ի Պաղտատ :
Ոմեան Մերկեան Աղա, ի Բէքէ :
Ոմեան Մկրտիչ Աղա, ի Կ. Պօլիս :
Ոմեան Յարութիւն Աղա, ի Կ. Պօլիս :
Ոմեան Պ. Առաքել, ի Փարիզ :
Ուրատեան Պ. Աբրահամ, ի Նիկոմիդիա :
Ուրատեան Մանտեսի Մաղաք Աղա, ի Կ. Պօլիս :
Ուրատեան Յակոբ Աղա, Հիւպատոս Իրուսիոյ եւ Ամերիկայի, ի Յուպպէ :
Ուրատեան Յարութիւն Աղա, ի Կ. Պօլիս :
Ուրատեան Պ. Յարութիւն, ի Կ. Պօլիս :
Ուրատեան Պ. Մկրտիչ, ի Փարիզ :
Ուրատեան Պ. Վարտիրոս, ի Փարիզ :
Սերեան Պ. Գարրիէլ, լեւաշ :
Սերեան Մօեր վարձապետ, ի Մոսքովա :
Սերեան Պ. Վարդան, ի Փարիզ :
Սերեան Պ. Բարսեղ, ի Փարիզ :
Սակորեան Պօղոս Աղա, ի Կ. Պօլիս :
Սովակիմեան Պ. Գրիգոր, ի Ճաւա :
Սովակիմեան Յովհաննէս Աղա, ի Մանչըսթեր :
Սովասափեանց Յովսէփ Աղա, ի Կարին :
Սովան, ի Ճաւա :
Սովանեան Պ. Յովհաննէս, ի Կ. Պօլիս :
Սովանեանց Գրիգոր Աղա, յԱղեքսանդրիա :
Սոգարեանց Առաքել Ավանեան, ի Շուշի :
Սահապետեան Պ. Գրիգոր, ի Ճաւա :
Սահապետեան Հ. Եղիա փոխանորդ Պատրիարքի, ի Կ. Պօլիս :
Սատիրեան բժիշկ Արիստակէս Աղա, ի Տփլիս :
Սերսիսեան Գրիգոր Աղա, ի Կ. Պօլիս :
Սեփուգեան Յարերիկ Աղա, ի Կ. Պօլիս :
Սորատունկեան Յակոբ Աղա, ի Կ. Պօլիս :
Սորատունկեան Սիմոն Աղա, ի Կ. Պօլիս :
Սուրեան Կարապետ Աղա, ի Կ. Պօլիս :
Տանձուրատեանց Վարտիրոս Եսայեան, ի Շուշի :
Տանձագեան Չենոր Աղա, ի Կ. Պօլիս :
Տանձագեան Պ. Կարապետ, ի Փարիզ :
Տաշեան Իերրաք Աղա, ի Կ. Պօլիս :
Տապանեան Յ. Մատրեոս, ի Կ. Պօլիս :
Տիրինեան Մանտեսի Նշան Աղա, ի Կ. Պօլիս :
Տիկեանց Յովհաննէս Մանտեսի Յարութիւնեան, ի Շուշի :
Տնորձարեան Գրիգոր Աղա, ի Զմիռնիա :
Արղանանեան Պ. Մանուկ, ի Ճաւա :
Անճեան Մաղաք Աղա, ի Կ. Պօլիս :
Ապիլիինի, ի Փարիզ :
Ձանուռեանց Յովհաննէս Աղա, ի Կ. Պօլիս :
Ձաւեան Եղիազար Աղա, ի Կ. Պօլիս :
Ձեմակըճեան Վարդերես Աղա, ի Բէքէ :
Չրագեան Յակոբիկ Արքիմ-Պէյ, ի Փարիզ :
Չրագեան Յովսէփիկ Արքիմ-Պէյ, ի Փարիզ :
Չօպանեան Յակոբ Աղա, ի Կ. Պօլիս :
Պալասանեան Աստուածատուր Աղա, լեւաշ :
Պաղազարեան Դուկաս Աղա, ի Զմիռնիա :
Պալեան Անտոն Աղա, ի Կ. Պօլիս :
Պալեան Կարապետ Ամիրաջ, ի Կ. Պօլիս (4 օրինակք) :
Պալեան Մակարիոս Աղա, ի Կ. Պօլիս :
Պալեան Նիկողայոս Աղա, ի Կ. Պօլիս :
Պալեան Սարգիս Աղա, ի Կ. Պօլիս :
Պաղզճեան Մանուկ Աղա, ի Կ. Պօլիս :
Պալիկոյ Տրպէն, ի Կ. Պօլիս :
Պալանտորրեան Նասիպ Աղա, ի Կ. Պօլիս :
Պապայեան Սիմոն Աղա, ի Կ. Պօլիս :
Պապասիսեան Գեորգ Աղա, ի Բէքէ :
Պապունիկեան Խաչիկ Աղա, լեւաշ :
Պապունց Սարգիս Մկրտիչեան, ի Նուխի :
Պասմանեան Կարապետ Աղա, ի Կ. Պօլիս :
Պատրիզպանեան Աւետիս Աղա, ի Կ. Պօլիս :
Պատրիզպանեան Պ. Թազուր, ի Փարիզ :
Պատրիզպանեան Պ. Կարապետ, ի Փարիզ :
Պետրոսեան Յովհաննէս Աղա ի Փարիզ :
Պետրոսեան Պօղոս Աղա, ի Կ. Պօլիս (3 օրինակք) :

Պէյագեան Սերովք Աղա, ի Նիկոմիդիա :
Պլըրզեան Յակոբ Աղա, լեւաշ :
Պլըրզեան Յարութիւն Աղա, ի Պորուշան :
Պէյլեան Յակոբ Աղա, ի Կ. Պօլիս :
Պէյլիկեան Մարտիկ Աղա, ի Կ. Պօլիս :
Պուլղուրեան Կարապետ Աղա, ի Կ. Պօլիս :
Պոշտիսեան Սարգիս Աղա, ի Կ. Պօլիս :
Ջունդ Պ. Աստուածատուր, ի Կ. Պօլիս :
Ջրասունեան Պ. Յարութիւն, ի Փարիզ :
Ռաֆայելեան Պ. Եղուարդ, ի Լոնտոն :
Ռուրէն Աղա Ժամագործ, ի Կ. Պօլիս :
Սախայեան Ալեքսան Աղա, ի Կ. Պօլիս :
Սամանճեան Մկրտիչ Աղա, ի Կ. Պօլիս :
Սարաֆեան Յովհաննէս Աղա, ի Կ. Պօլիս :
Սարիմեան Մագսուտ Ամիրայ, ի Կ. Պօլիս :
Սաւալանեանց Հ. Թ. Տիգրան Աղա, ի Զմիռնիա :
Սեյինեան Գեորգ Աղա, ի Սիմֆերոպոլ :
Սեյինեան Կարապետ Աղա, ի Խարասու :
Սրբանեան Յարութիւն Աղա, ի Կ. Պօլիս :
Սինանեան Անտոն Աղա, ի Կ. Պօլիս :
Սիրունեան Յակոբ Աղա, ի Կ. Պօլիս :
Սուլուխանեան Նիկողայոս Աղա, ի Կ. Պօլիս :
Ստեփանեանց Միքայիլ Յարութիւնեան, ի Տփլիս :
Ստիմարանեան Գեորգ Աղա, ի Կ. Պօլիս :
Սրճագաշեան Լուսիկ Աղա, լեւաշ :
Վահանեան Յովհաննէս Աղա, ի Կ. Պօլիս :
Վարդագարեան Յակոբ, յԱգուլիս :
Վարդանեան Յովսէփ Պէյ, ի Կ. Պօլիս :
Վարպետեան Յովսէփ Աղա, ի Կ. Պօլիս :
Վիլենեան Սերովք Աղա, ի Կ. Պօլիս :
Տակետեան Պ. Յովհաննէս, ի Փարիզ :
Տակետեան Պ. Սիմոն, ի Փարիզ :
Տակուրեան Վ. Տիգրան, ի Կ. Պօլիս :
Տատեան Մկրտիչ Էֆեմի ի Փարիզ (2 օրինակք) :
Տատեան Յովհաննէս Պէյ, ի Կ. Պօլիս (4 օրինակք) :
Տատեան Պօղոս Պէյ, ի Կ. Պօլիս (4 օրինակք) :
Տաուտ Պօղոս Աղա, ի Կ. Պօլիս :
Տեմիրձիպաշեան Ենովք Աղա, ի Կ. Պօլիս :
Տեմիրձիպաշեան Պետրոս Աղա, ի Կ. Պօլիս :
Տեռեան եղբարք, ի Զմիռնիա :
Տեր Դասպարեան Դագարոս Աղա, յԱղեքսանդրիա :
Տեր Գեորգ քանանայ, ի Կ. Պօլիս :
Տեր Գրիգոր քանանայ Պէյլիկաշու :
Տեր Լուկասեան Յովհաննէս Աղա, ի Կ. Պօլիս :
Տեր Մարութեանց Մարութեան Աղա, ի Կ. Պօլիս :
Տեր Մկրտիչեանց Մանտեսի Դաւուտ, յԱգուլիս :
Տեր Մկրտիչեանց Վարտիրոս, յԱգուլիս :
Տիւգեան Միհրան Պէյ, ի Կ. Պօլիս :
Միհրան Նշան Աղա, ի Կ. Պօլիս :
Փափագեան Միրիճան Աղա, ի Կ. Պօլիս :
Փափագեան Պօղոսիկ Աղա, ի Կ. Պօլիս :
Փափագեան Պ. Սեպուհ, ի Փարիզ :
Փէշտըմաշեան Գեորգ Աղա, ի Կ. Պօլիս :
Փէշտըմաշեան Մանակ Աղա, ի Կ. Պօլիս :
Փարավագեան Ռօզա Տիկիլ, ի Փարիզ :
Փաֆաֆեան Մանուկ Աղա, ի Կ. Պօլիս :
Փաֆաֆեան Պ. Նասիպ, ի Փարիզ :
Փաֆաֆեան Պ. Միհրան, ի Փարիզ :
Փեմիսանեան Դաւուտ Աղա, ի Կ. Պօլիս :
Փեմիսանեան Պ. Արիստակէս, ի Փարիզ :
Փեմիսանեան Պ. Դանիէլ, ի Փարիզ :
Փեմիսանեան Պ. Ռուրէն, ի Փարիզ :
Փեօքեքեան Խաչատուր Աղա, ի Փարիզ :
Փիւրքճեան Յովհաննէս Աղա, ի Զմիռնիա :
Փիւրքճեան Ռուրէն Աղա, ի Կ. Պօլիս :
Փիւրքճիսանեան Մկրտիչ Աղա, ի Կ. Պօլիս :
Փիւրքճիսանեան Մուրատիկ Աղա, ի Կ. Պօլիս :
Փիւրքճիսանեան Պ. Խաչատուր, ի Կ. Պօլիս :
Փիւփէճի Յարութիւն Աղա, ի Կ. Պօլիս :
Օտապաշեան Մանտեսի Գեորգ Աղա, ի Սերաստիա :
Օտապաշեան Յովհաննէս Աղա, ի Վեննա :
Օտապաշեան Պ. Սերովք, ի Փարիզ :
Օտեան Պ. Խաչիկ, ի Փարիզ :
Յրեկեան Ռբրահամ Աղա, ի Կ. Պօլիս :
Յրեկեան Յակոբ Աղա, ի Կ. Պօլիս :

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ .

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ .

Հայկազեան Վարժարան ի Փարիզ .

Քերթուած . Ո՞վ իցե նման ինչ յաստուածս , Տէր .

Նամակ Վահանայ Արշարունուոյ , Տեառն Հ . Միքայելի Վ . Զամբեան .

ՀԱՆԳԻՍԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԱՇԷՆ ՄԱՐԳԿԱՆ .

Ֆրանսոսա Արակոյ .

ԿԵՆՑԱՂՕԳՈՒՄ ԲԱՆՔ .

Բանալի բնական զիտելեաց . (Շարայարութիւն .)

Զկնորսք կամ Աղքատութիւն .

Ախրիզան .

ՓԱՐԻԶԵԱՆ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔ .

Նամակ Մարկոսեան Գրիգոր Էֆենտիի .

Արդարասիրութիւն եւ Երախտագիտութիւն .

Սընի լերան ծակուիլը .

Նախապաշարումն .

SOMMAIRE .

MUSÉE ARMÉNIEN .

Collège national arménien à Paris .

Poésie : *Qui est semblable à toi parmi les dieux , Jehovah !*

Lettre de Vahan Archarouni , par le R . P . Michel Tchamtschian .

GALERIE DES HOMMES DE MÉRITE .

François Arago .

CONNAISSANCES UTILES .

La clef des sciences naturelles . (Suite .)

Les pêcheurs ou la Pauvreté .

Le Muguet , nouvelle .

CHRONIQUE DE PARIS ET NOUVELLES DIVERSES .

Lettre de M Kricor Efendi Margossian .

Probité et Reconnaissance .

Percement du mont Cenis .

Préjugé .

ԳԻՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ .

Ի Փարիզ , տարեկան . Ֆրանք . 20 »
 Ի Կոստանդնուպոլիս , ի Զմիտ-
 նիս , յԱղեքսանդրիա , եւ
 ի Հնդկիս 24 »
 Ի Ռուսաստան եւ ի Պարսկա-
 ստան 25 »
 Գին միոյ տետրակի 3 »

PRIX D'ABONNEMENT :

Paris , par an Fr. 20 »
 Constantinople , Smyrne ,
 Alexandrie , Indes 24 »
 Russie et Perse 25 »
 Prix d'un exemplaire 5 »

ԳՈՐԾԱԿԱԼՔ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

ՓԱՐԻԶ , Պ . Ճ . Արամեան , ի փողոցն Օեն-Սիւլփիս 38 .
 կամ ի զբանոցի նորա , ի փողոցն Ապէլի , թի . 5 .
 ՎԵՆՆԱ , Յակովբոս աղա Արշակ .
 ՊՈԼԻՍ , Կարապետ աղա Իսիճեան .
 ԶՄԻՒՆՆԻԱ , Ղուկաս աղա Պալլազարեան .
 ԱՂԵՔՍԱՆԳՐԻԱ , Ղազարոս աղա Տէր-Գասպարեան .
 ԵԱՆ ՄՈԼՏԱՒՈՑ , Յակոբ աղա Պրյրզեան .

ON SOUSCRIT

A PARIS , chez D . Aram , rue Saint-Sulpice , 38 , ou à son
 bureau , rue de l'Abbaye , 5 .
 VIENNE , H . Arschag , Biber-Bastei , 659 .
 CONSTANTINOPLE , G . Utudjian .
 SMYRNE , L . Balthazar .
 ALEXANDRIE , L . D . Gasparian .
 JASSY , J . Bouioukly .